Doi:10.54503/0135-0536-2022.1-73

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՉԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ (1918 թ. հունիս–հուլիս)*

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Գերմանիա, Օսմանյան կայսրություն, Օ. ֆոն Լոսսով, Ն. Ժորդանիա, Վեհիբ փաշա, Թ. Նազարբեկյան, Արամ Մանուկյան, Խ. Կարճիկյան, Լոռի, Բորչալու, Ախալքալաք, Ղարաբաղ:

Նախաբան

Բաթումի պայմանագիրը, որը դարձավ Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի անկախությունը ճանաչող առաջին միակ քաղաքական ակտը և այդպիսով ընդունեց անկախ հանրապետությունների տարածքներն ու պայմանական սահմանները, չկանխեց Օսմանյան Թուրքիայի և Գերմանիայի ներկայության կասեցումը տարածաշրջանում:

Անդրկովկասի հանրապետությունների անկախության հայտարարման նախօրեին երկրամասի քաղաքական շրջանակներում արդեն կիսվում ու բաժանվում էին ազգային տարածքները: Այդ գործընթացն ուղղակիորեն կապվում էր Բաթումի բանակցություններից բխող պահանջների, հայկական կողմի համար՝ թուրքական վերջնագրի հետ: Միաժամանակ Անդրկովկասի սահմանաբաժանման սկզբունքների հիմնահարցը և դրա խախտումն է հիմնականում ընկած հետագա վեճերի, ընդհարումների ու պատերազմների հիմքում:

Անդրկովկասի վարչատարածքային սահմանաբաժանումների հիմնահարցը 1917 թ. Ռուսաստանյան հեղափոխությունների համատեքստում

Անդրկովկասի ժողովուրդները և կառավարությունները, որոնք իրենց անկախ հռչակեցին, հայտարարեցին՝ իրենք հավասարապես իրավատեր են Անդրկովկասի տարածքի նկատմամբ[1]: Այդ տարածքը պետք է բաժանվեր ազատ ինքնորոշման իրավունքի և էթնիկական սկզբունքի հիման վրա՝ համաձայնեցված տեղագրական (տոպոգրաֆիկական) ու տնտեսական պայմաններով: Պարզ էր նաև, որ, եթե Անդրկովկասի երեք գլխավոր ազգերը համաձայնվում էին համատեղ հայտարարել իրենց որպես Անդրկովկասի ընդհանուր տարածքի տեր, ապա որևիցե պայմանագրեր, որոնք կնքվել էին այդ ժողովուրդների ու երրորդ կողմի միջև, ինչպես, օրինակ, 1783 թ. Գեոր-

---

* *Ներկայացվել է 06. VII. 2021 թ., գրախոսվել է 30. VII. 2021 թ., ընդունվել է տպագրության 24. I. 2022 թ.: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ի և ՀՀՌՀ (ՌԴ) տրամադրված ֆինանսավորմամբ՝ 20RF–103 ծածկագրով գիտական համատեղ ծրագրի շրջանակներում:*

[1] *Հանգամանորեն տե՛ս Մ ե լ ի ք յ ա ն. 2010, 125–145:*

գիևյան պակտը, չէին կարող ազդել այդ սեփականատերերի իրավունքների և հարաբերությունների վրա[2]:

1917 թ. Ռուսաստանյան հեղափոխությունների շրջանում էթնիկական բաժանման սկզբունքը դրվել էր ինչպես իշխանական, այնպես էլ ազգամիջյան բազմաթիվ խորհրդակցությունների հիմքում և հավանության էր արժանացել կուսակցությունների կողմից:

Մեր կողմից բազմիցս հիմնավորվել է, որ 1917 թ. Փետրվարյան հեղափոխությամբ սկսված ու բոլշևիկյան հեղաշրջմամբ ամրապնդված վրաց-թաթարական հակահայկական դաշինքը, ի դեմս Կոմիսարիատի գեմստվային գործունեության, «վիճելի տարածքներ» դարձրեց հենց հայկական տարածքները, այդ թվում՝ Բորչալուն, Գանձակը, Զանգեզուրը, Ղարաբաղը, Լոռին և այլն:

1917 թ. հոկտեմբերի 14–15-ն Ա. Զիսենկելու նախագահությամբ և Ն. Ժորդանիայի ու Ե. Գեգեչկորու մասնակցությամբ կայացած Օզակոմի խորհրդակցությունը մերժել էր Ավ. Խատիսյանի ու Ա. Շահխաթունյանի՝ Պետրոգրադում ներկայացված ծրագիրը: Ա. Շահխաթունյանի արտահայտությամբ՝ «վերաբաժանման հարցում «հայկական», «կուսակցական», «միակողմանի» նախագծի դեմ դարձյալ սկսվեց վրաց-ադրբեջանական դաշինքի գործունեությունը՝ այս անգամ որպես վարչական վերաբաժանման դեմ արհեստականորեն ստեղծված երկարաժամկետ գենք[3]:

Անկախ Վրաստանի տարածքը որոշելու ընթացքում ոչ միայն ջնջվում էին ազգային հարցում վրացական կուսակցությունների միջև եղած իրարամերժ ու խորքային տարաձայնությունները, այլև հարևաններ՝ հատկապես Հայաստանի տարածքները կորզելու հարցում անտեսվում էին «սրբորեն» ընդունված սահմանաբաժանումների սկզբունքները:

Վրաց մենշևիկների «Борьба», «Էրթոբա» թերթերը, որոշելով, որ եկել է վճռական պահը և մոռանալով ոչ վաղ անցյալում ընդունած որոշումները, «Հուգենոտների տրամաբանությամբ», հիմա էլ ապացուցում էին՝ Վրաստանը չի կարող կանգնել սկզբունքային դեմոկրատական հայեցակարգի վրա՝ ելնելով ազգերի ռեալ բնակության սկզբունքից, այլ «պետք է կանգնի պետության պատմական և ստրատեգիական խնդիրների հայեցակետի վրա»[4]: Այս տեսակետից մենշևիկներն ու իրենց մամուլը միանգամայն նպատակահարմար էին գտնում, որ Բորչալուի գավառը, Ղարաքիլիսան, Սևանա լիճը, Ղազախը և Զաքաթալան կցվեն Վրաստանին:

Անդրկովկասը 1918 թվականին՝ չհաշված Դաղստանը, ուներ 210.000 քառ. կիլոմետր տարածք ու 7.100.000 բնակչություն, որից 2.650.000-ը՝ մահմեդական, 1.825.000-ը՝ հայ, 1.750.000-ը՝ վրացի (այդ թվում՝ 150.000 վրացի մահմեդականներ) և 900.000 այլ ազգություններ: 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի համաձայն՝ Անդրկովկասից պոկվում էին Կարսի ու Բաթումի շրջանները՝ 25.000 քառ. կիլոմետր տարածքով և 600.000 բնակչությամբ:

---

[2] *Տե՛ս* Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 7–9.

[3] *Մ ե լ ի ք յ ա ն. 1997, 119–120, Մ ե լ ի ք յ ա ն. 2010, 125–145:*

[4] *Տե՛ս «Աշխատավոր» (Թիֆլիս), 02. VII. 1918:*

Քանի որ սպասվող սահմանաբաժանումների գործընթացում այդ երկու շրջանները հաշվի չէին առնվում, ստացվում է՝ Անդրկովկասին մնում էր 185.000 քառ. կիլոմետր՝ 6.650.000 բնակչությամբ, որից 2.450.000 մահմեդական, 1.650.000 հայ, 1.600.000 վրացի և 800.000 այլ ազգություններ[5]:

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի համաձայն՝ համեմատաբար շատ տարածք էր գրավվում Թուրքիայի կողմից: Բաթումի պայմանագրով Արևելյան Հայաստանից ու Վրաստանից խլվում էր 38 հազար քառ վերստ[6]՝ 1.250.000 բնակչությամբ:

Վրաստանից անջատվում էր 10 հազար քառ. վերստ՝ 350 հազար բնակչությամբ, Հայաստանից՝ 28 հազար քառ. վերստ՝ 900 հազար բնակչությամբ: Հայաստանի տարածքը 12 հազար 421 քառ. վերստով ավելին էր (655 հազար բնակչություն), քան այն, որ պետք է ազատվեր Բրեստի համաձայն: Այսպես, Թուրքիային էին անցնում Ախալցխայի գավառը՝ 2.377 քառ. վերստ, Ախալքալաքի գավառը՝ 2.407 քառ. վերստ, Սուրմալուի գավառը՝ 3.147 քառ. վերստ, Ալեքսանդրապոլի գավառի 3/4-ը՝ 2.540 քառ. վերստ, Երևանի գավառի 1/2-ը 1.360 քառ. վերստ, Շարուր-Դարալագյազի գավառի 1/5-ը – 590 քառ. վերստ, ընդամենը՝ 12.421 վերստ[7]: Պատմաբան Դ. Զավրիևը, Մոսկվայի արխիվի տվյալների համաձայն, ներկայացնում է այն տարածքների ազգային կազմը, որոնք թուրքերի պահանջով ավելին էին, քան Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսվածը[8].

Գավառներ	*Քարթվելներ*	*Մահմեդականներ*	*Հայեր*	*Ռուսներ*	*Այլ*
Ախալցխայի	*6.430*	*17.915+19.470 քարթվել-մահմեդական*	*26.800*	*540*	
Ախալքալաքի	*7.570*	*7.910*	*63.840*	*8.150*	
Սուրմալուի	*–*	*66.300*	*30.300*	*–*	
Ալեքսանդրապոլի	*420*	*5.250*	*172.4000*	*1.950*	
Էջմիածնի	*–*	*41.600*	*75.850*	*420*	
Երևանի	*–*	*48.000*	*30.100*	*1.300*	
Շարուր-Դարալագյազի	*–*	*12.000*	*4.700*	*60*	
Ընդհանուր՝	*14.420*	*199.000+19.470*	*404.000*	*12.400*	*4.150*

Այս թվերին Վրաստանի Արտաքին գործերի նախարարությունն ավելացնում է 300 հազար արևմտահայ փախստականներին. 100 հազար՝ Վանից, Ալաշկերտից (բնակվել են Սուրմալուի, Էջմիածնի, Երևանի գավառներում), 200 հազար՝ Էրզրումից, Երզնկայից, Բիթլիսից, Մուշից, Մանազկերտից (բնակվել են Ալեքսանդրապոլի, Ախալցխայի գավառներում): Այսպիսով, Թուրքիան գավթել էր տարածքներ, որտեղ թուրքերը կազմում էին բնակ-

[5] *Տե՛ս* Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 4–5.

[6] *Վերստ՝ ռուսական չափման միավոր, հավասար է 500 սաժենի – 1 վերստը կազմում է 1.0688 կմ:*

[7] Заврие в. 1947, 69–70.

[8] Заврие в. 1947, 70.

չության միայն 30 տոկոսը, հայերն ու վրացիները՝ 67, փախստականներին հաշվի առնելով՝ համապատասխանաբար՝ 16 և 83 տոկոս: Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի և Վրաստանի հաշվին Անդրկովկասից Թուրքիան խլեց տարածքի 20.6 տոկոսն ու բնակչության 18.5 տոկոսը: Բացի դրանից, Անդրկովկասը զրկվեց Անդրկովկասյան երկաթուղու գրեթե ողջ հարավային հատվածից՝ Սարիղամիշ-Կարս-Ալեքսանդրապոլ-Ջաջուռ-Ուլուխանլու (Մասիս)–Ջուլֆա, այսինքն՝ երկաթուղին կրճատվեց 868 վերստով[9]*:*

Աշխարհագրական սկզբունքից ելնելով՝ նոր սահմանագիծն արհեստական բնույթ էր կրում. այդ կոնֆիգուրացիան, միաժամանակ բացահայտում էր Թուրքիայի ապագա նվաճողական պլանները՝ մասնավորապես Բաքուն գրավելու ծրագիրը:

Նորանկախ հանրապետությունների սահմանաբաժանումների հիմնահարցը

Անդրկովկասի նորանկախ հանրապետությունների առջև ծառանում էր երկրամասի տարածքային սահմանաբաժանման հիմնահարցը:

Հունիսի 2-ին Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության (ՎԴՀ) կառավարության նիստը որոշեց, որ «Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միջև սահմանների ուղղումն ու հաստատումը կազմում է բացառապես այդ երկրների կառավարությունների իրավասությունը: Վրաստանի կառավարությունը Թիֆլիսում, առանց Թուրքիայի միջամտության, կարող է Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների հետ անմիջական բանակցություններ վարել: Իսկ եթե այս հարցի առնչությամբ հայտնվի այս կամ այն պայմանագիրը, մի կողմից՝ Օտոմանյան կայսրության, մյուս կողմից՝ Ադրբեջանի ու Հայաստանի միջև, կամ նրանցից մեկի հետ, ապա Վրաստանի կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող ճանաչել այն՝ իր համար ընդունելի ու պարտադիր»[10]*:*

Հունիսի 5-ին բանվորների և զինվորների պատգամավորների երկրամասային կենտրոնն ու Գործադիր կոմիտեն ընդունում են բանաձև: Այնտեղ նշվում էր՝ Ն. Ժորդանիայի գլխավորած կենտրոնը, տեղեկանալով Բաթումի պայմանագրի մասին, որոշում է իր բոլոր ուժերն ուղղել կայուն դեմոկրատական կարգի կազմակերպմանը և ռազմական ուժի ստեղծմանը, «որը ունակ կլինի այդ պայմանագիրը կյանքի կոչելու ընթացքում պաշտպանել դեմոկրատիայի իրավունքները և Վրաստանի Հանրապետության ինքնիշխանությունը ու հեղափոխության նվաճումները»[11]*:*

Այս երկու որոշումները վկայում են, որ նորաստեղծ ՎԴՀ-ը պատրաստվում էր նոր սահմանները հարևանների հետ «ուղղել և հաստատել» իր օգտին ու զենքի ուժով, ապա և իրականում լրջորեն մտահոգված էր ինչպես Թուրքիայի ծավալապաշտական նկրտումներով, այնպես էլ Գերմանիայի

---

[9] Заврие в. 1947, 70–71.

[10] *Տե՛ս* Национальный архив Грузии (*այսուհետ՝* НАГ), ф. 1861, оп. 2, д. 1, л. 111; *Նաև՝ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 11:*

[11] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. 1919, 366–367.

անկանխատեսելի վարքագծով, թեև մայիսի 28-ին Փոթիում կնքված վրաց-գերմանական նախնական պայմանագրով Գերմանիան ճանաչում էր ՎԴՀ-ը և պարտավորվում պաշտպանել նրա տարածքի անձեռնմխելիությունը[12]*:*

Այդ մասին է վկայում գեներալ Օ. ֆոն Լոսսովի հեռագիրն՝ ուղղված Վրաստանի կառավարությանը. «Գերմանական բարձրագույն հրամանատարությունը և կառավարությունը համաձայն է ձեր նախաձեռնած բոլոր գործողություններին: Թուրքերի մոտենալու ժամանակ կայարաններում և նավահանգիստներում դրված պարեկակետերը չպետք է թշնամաբար վերաբերվեն նրանց, բայց ամեն գնով պետք է մնան իրենց տեղում և հայտարարեն թուրքերին, որ նրանք տեղակայվել են Գերմանական բարձրագույն հրամանատարության կողմից ու դաշնակիցների շահերից ելնելով՝ պաշտպանում են վրացական երկաթուղիները»[13]*:*

Վրացական կողմը հատուկ շեշտադրում էր Բաթումի պայմանագրի 3-րդ հոդվածը, ըստ որի պարզվում էր՝ Վրաստանի և Հայաստանի միջև սահմանաբաժանումը պետք է դառնար երկու հանրապետությունների հատուկ համաձայնության առարկա[14]*: Սակայն այդ համաձայնությունը չկնքվեց:*

Հայ-վրացական տարածքային սահմանազատման հիմնահարցի բեկումնային փուլը սկսվում է 1918 թ. հունիսի 11-ից: Այդ օրը Թիֆլիսում Ն. Ռամիշվիլու կողմից հրավիրվեց խորհրդակցություն, որտեղ ՎԴՀ կառավարության նախագահը հայտարարեց, որ նկատի ունենալով հայերի ու վրացիների միջև տարաձայնությունների բացակայությունը՝ անհրաժեշտ է լուծել հայ-ադրբեջանական վեճը[15]*: Սա հեռուն գնացող հայտարարություն էր. ի դեպ՝ այդ ուղղվածությամբ էլ ընթացավ խորհրդակցությունը, որի ծրագրային զարգացումներին էլ կփորձենք հետևել: Կարևորն այն էր, որ տվյալ փուլում փաստվում էր՝ հայ-վրացական տարածքային վեճ չկա: Ավելին, Ն. Ռամիշվիլին և Վրաց ազգային խորհրդի՝ (ՎԱԽ) նախագահ Ն. Ժորդանիան Թիֆլիսում այցելում են Հայոց ազգային խորհրդի (ՀԱԽ) և Ավ. Ահարոնյանին, Հ. Քաջազնունուն ու Ալ. Խատիսյանին հավաստիացնում. «Բորչալուի խնդիրը անհրաժեշտ է լուծել էթնիկական սկզբունքով»: Ախալքալաքի մասին խոսք չէր գնում, քանի որ Բաթումի պայմանագրով այն զբաղեցված էր թուրքական զորքերի կողմից*[16]*:*

Հունիսի 12-ին ՀԱԽ-ը դիմում է ՎԴՀ կառավարության նախագահ Ն. Ռամիշվիլուն՝ Բորչալուի գավառում երկաթուղային հաղորդակցությունը վերաբացելու հարցով: Կարելի է վստահաբար պնդել, որ այն փակվել էր վրացիների կողմից: Ավ. Ահարոնյանը տեղեկացնում էր Վեհիբ փաշայի հանձնաբարականի մասին, ըստ որի վերջինս, ելնելով Բաթումի պայմանագրից, Թիֆլիս էր գործուղել բրիտանացի կապիտան Ռեջենտին, որը երկաթուղու ողջ երկայնքով ընկած բնակավայրերում՝ իրենց հայ, թաթար, վրացի բնակ-

[12] *Տե՛ս «Հորիզոն» (Թիֆլիս), 19. VI. 1918:*

[13] Документы и материалы. 1919, 367.

[14] Из истории армяно-грузинских отношений, 1918 год (Пограничные конфликты; переговоры; война; соглашение). 1919, 9.

[15] Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 11.

[16] Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 11.

չությամբ, պետք է հաղորդեր պայմանագրի ստորագրման և բոլոր տեսակի թշնամական գործողությունների դադարեցման մասին: Ելնելով ասվածից՝ ՀԱԽ-ի նախագահը խնդրում էր Ն. Ռամիշվիլուն՝ շոգեքարշ և մի վագոն տրամադրել կապիտանի անարգել Ղարաքիլիսա հասնելու համար, քանի որ «Երևանի հետ հաղորդակցության վերականգնումը Հայկական կառավարության առաջնահերթ խնդիրն է»[17]:

Հունիսի 13-ին ՀԱԽ-ը դիմում է ՎԱԽ-ին՝ Բորչալուի հարցի շուրջ բանակցություններ սկսելու վերաբերյալ՝ ելնելով հունիսի 11-ի հաղորդակցության հուսադրող հարցադրումից: Նշվում էր, որ համաձայն մի կողմից Ն. Ժորդանիայի ու Ն. Ռամիշվիլու, մյուս կողմից՝ Ավ. Ահարոնյանի, Հ. Քաջազնունու և Ալ. Խատիսյանի միջև ընթացող բանակցությունների, ՀԱԽ-ը Հայաստանի ու Վրաստանի միջև սահման հաստատելու և ընդ որում, այդ բանակցությունների համաձայն Բորչալուի գավառը էթնիկական սկզբունքով բաժանելու նպատակով, ընտրել է լիազոր-ներկայացուցիչներ[18]: Նրանց թվում էին հունիսի 11-ի խորհրդակցության մասնակիցներ Խ. Կարճիկյանը, Գ. Խատիսյանը և Գ. Ղորղանյանը[19]:

Մինչդեռ, երբ հայ լիազորները վրացական կողմի լիազոր Ի. Ծերեթելու հրավերով ներկայացան, ապա վերջինս ՎԱԽ-ի անունից հայտարարեց, որ Վրաստանի կազմի մեջ են մտնում ոչ միայն Բորչալուի և Ղազախի գավառներն ամբողջությամբ, այլև Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասը: Եվ դա հիմնավորվում էր նրանով, որ հայերով բնակեցված շրջանների կցումը Վրաստանին թելադրվում է ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի շահերից ելնելով, «քանի որ հայերը Բաթումի համաձայնությունից հետո չեն կարող ձևավորել որևէ կենսունակ պետություն, ուստի նրանց համար շահավետ է ամրացնել Վրաստանը, որպեսզի Կովկասում լինի հզոր քրիստոնյա պետություն, որը գերմանացիների օգնությամբ կպաշտպանի թե իրենց և թե հայերին»[20]: Դրան հետևեց Ավ. Ահարոնյանի պահանջը՝ բանակցությունները սկսել միայն ազգաբնակչության «իրական բաշխման սկզբունքի հիման վրա», ինչը հաստատվել էր փոխադարձ համաձայնություններով[21]:

Խ. Կարճիկյանն էլ պատասխանում է Ի. Ծերեթելուն, թե նրա առաջարկը Վրաստանի, Ադրբեջանի ու Թուրքիայի միջև Հայաստանի բաժանման վերաբերյալ հին պլան է, և որ վերջինիս առաջարկությունը հակասում է Ժորդանիայի ու Ռամիշվիլու այն հայտարարություններին, որոնց հիմքի վրա հավաքվել էին լիազոր ներկայացուցիչները[22]:

Վրաստանի հիմնադիր-հայրերի կտրուկ շրջադարձը և համարձակությունը բացատրվում է վիճելի տարածքում գերմանական զորքերի հայտնվելով: Հունիսի 17-ի թուրք-գերմանական համաձայնագիրը Թուրքիային տրամադրում էր Երևանի, Գերմանիային՝ Թիֆլիսի նահանգը:

---

[17] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 14:*
[18] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 15:*
[19] Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 11.
[20] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 15:*
[21] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 15:*
[22] *Տե՛ս* Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 11.

Հունիսի 18-ին գնդապետ Տ. Բաղդասարովը[23] վկայում էր, որ գերմանական զորքերը մարտեր են մղում տեղացիների դեմ, հնարավոր է՝ և թուրքերի: Նրանք հասել էին Քոլագերան կայարան, որի միջով թուրքերը փորձում էին անցնել Ղազախ: «Քոլագերանում կանգնած է զրահագնացք՝ գերմանական դրոշներով,– նշում էր նա:– Դսեղում գերմանացի զինվորները զգուշացրին հայերին, որ Ղազախ շարժվող թուրքական բանակը վերադառնալու է: Եղան և հայ կամավորներ, որոնք ուզեցին զինվորագրվել գերմանացիներին, բայց մերժվեցին: Հաստատվեց նաև, որ Սաղախլոյի մոտ մարտերից հետո գերմանացիներն ու վրացիները գրավեցին Սանահինը, որտեղ զինաթափ արին թուրքական երկու էշելոն: Հաղորդվում է նաև, որ մոտ օրերս նրանք մտնելու են Ղարաքիլիսա»[24]: Ի դեպ, Կ. Պոլիս մեկնող հայ պատվիրակներին ուղղված Ն. Աղբալյանի զեկուցագրում նշվում էր, որ Հայաստանի «սահմանների» երկայնքով՝ Երևանից Դիլիջան ու Նոր Բայազետի հատվածում կուտակվել են 500 հազար գաղթականներ. Իրանի մոտ կոտորվել էին մի ամբողջ գնացք որբեր ու գաղթականներ[25]: Ինչպես տեսնում ենք, վրաց-գերմանական դաշինքը գործում էր: Միաժամանակ, մի փոքր ուշ՝ հունիսի 24-ին, ՀԱԽ-ի նիստում Հովհ. Թումանյանը հայտնում է, որ թուրքերը գրավել են Սաղախլոն և Դսեղը, գաղթականներին անխնա կոտորում եմ Ջալալօղլիում (Ստեփանավան) և Դիլիջանում[26]:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Բորչալուում տեղի ունեցած թուրքերի, թաթարների և վրաց-գերմանական զորքերի միջև ընդհարումների ժամանակ վրաց գործիչները հայտարարեցին հայկական կողմին, որ «Բորչալուի հայկական մասը զբաղեցվում է վրացիներով միմիայն թուրք-թաթարների դեմ պաշտպանվելու նպատակով. հետո այն կվերադարձվի հայերին»[27]:

Ակնհայտ է, որ վրացիների գործողություններն ընթացան Ի. Ծերեթելու հայտարարության ոգով. վերջնականապես փշրվեց հայերի իլյուզիան՝ հայկական շրջանների հանդեպ վրացական դիրքորոշման արդարության նկատմամբ: Եղան և նոր քննարկման առաջարկներ, բայց իրականում հայկական տարածքները զբաղեցվում էին վրաց-գերմանական զորքերի կողմից:

Ծրագիրը, փաստորեն, իրականացավ. թուրքերն իրենց առջև գտնելով գերմանական հենակետերը՝ կանգ առան … բայց կանգ չառան Բաքվի հարցում:

Հիմք ընդունելով հունիսի 2-ի ՎԴՀ կառավարության սահմանների ճշգրտման վերաբերյալ որոշումը՝ հունիսի 5-ի նիստում Ռազմական նախարար Գ. Գեորգաձեն զեկուցում է «Իրավիճակը Բորչալուի գավառում և վրացական պետության հստակ սահմանների որոշման անհրաժեշտությունը» թեմայով: Որոշվում է՝ «ներկա սահմանների պաշտպանության համար հանձնարարել Ռազմական նախարարին՝ ներքին գործերի նախարարի մասնակ-

[23] *ՀՀ բանակի գեներալ-մայոր, Հայկական համահավաք ջոկատի 3-րդ բրիգադի և 1918 թ. Հայկական դիվիզիայի 3-րդ բրիգադի հրամանատար:*

[24] *Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. Քաղաքական պատմություն, փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 2000, 47:*

[25] *Տե՛ս Սուքիասյան. 2019, 87–88:*

[26] *Սուքիասյան. 2019, 88:*

[27] *Տե՛ս* Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, 11.

ցությամբ, զինված ուժեր տեղակայել Բորչալուի, Սղնախի ու Թիֆլիսի գավառների սահմաններին. սահմանների առարկայական ճշգրտման նպատակով ձևավորել մասնավոր հանձնաժողով, որի կազմի մեջ կմտնեն Դ. Օնիաշվիլին, Ակ. Մղիվանին և Տակայշվիլին»[28] *(ընդգծումը մերն է – Վ. Մ.):*

Հունիսի 11-ին կառավարության նախագահի՝ «Հայաստանի և Ադրբեջանի հետ սահմանների ճշգրտման համար հանձնաժողով ստեղծելու մասին» զեկուցման արդյունքում որոշվեց՝ «Հիմնել հանձնաժողով Վրաստանի սահմանները որոշելու համար»: Դրա կազմում էին Ի. Ծերեթելին, Դ. Օնիաշվիլին, Ի. Ինգորոկովը, գեներալ Ի. Օղիշելիձեն[29]*: Հունիսի 11-ին հանձնաժողովը լսեց Ի. Ինգորոկովի զեկույցը, որի հիմնական եզրակացությունները հետևյալն էին. Վրաստանը, որպեսզի պետություն դառնա, պետք է պարփակվի այնպիսի սահմաններում, որոնք հարմար կլինեն թե՛ տնտեսական, թե՛ ռազմական առումով: «Արևելյան Վրաստանի միակ բնական սահմանը արևելքում և հարավում այսպիսին են,– ասվում էր զեկուցման մեջ. – հարավից սահմանը ձգվում է Փոքր Կովկասի լեռնաշղթայով, անցնում է Բորչալուի գավառի հարավային սահմանի մոտով, Ղարաքիլիսայից (Վանաձոր – Վ. Մ.) հարավ, հասնում է մինչև Գոքչի (Սևանա լիճ – Վ. Մ.) լճի հյուսիսային ափը, թեքվում է հյուսիս ու Աղստեֆ գետով հասնում է մինչև Ջեղամ կայարանը, ներառում է Զաքաթալայի օկրուգը և ավարտվում Սիլավաթ լեռով»*[30]*: Զեկուցողն «ապացուցում» էր, որ «Վրաստանի պատմության ողջ ընթացքում նկատվում է հենց այս սահմաններին հասնելու ձգտումը և այդ սահմաններում՝ մինչև Սուրամի լեռնաշղթա չկա պաշտպանություն»*[31]*: Ի. Ինգորոկովը վճռականապես դեմ էր ազգագրական-էթնիկական սահմանների գծմանը, ինչը հետևողական պաշտպանում էր վրաց սոցիալ-դեմոկրատ մենշևիկների կուսակցությունը: Նա կարծում էր, որ նման սահմանազատումը «չի համապատասխանում պետականության պահանջներին»*[32]*:*

Վրացական կողմի տեսանկյունից, այս հանձնաժողովը կարծիքների փոխանակման համար հրավիրել էր հայկական ու ադրբեջանական ազգային խորհուրդների ներկայացուցիչներին. ադրբեջանցիները չէին ներկայացել: Հայոց ազգային խորհրդի կողմից մասնակցում էին Գ. Խատիսյանը, գեներալ Գ. Ղորղանյանը և Խ. Կարճիկյանը: Ներկայացվում են հայկական պահանջները. « … նրանք հավակնում են,– (նկատի ունեին վրացական կողմը – Վ. Մ.) այն գծին, որի հետ ավելի վաղ համաձայնեցվել են երեք ազգերը[33] *(նկատի ունեն Անդրկովկասյան կոմիսարիատի իրականացրած հետհոկտեմբերյան սահմանաբաժանումները և զեմստվային բարեփոխում-*

---

[28] Из истории армяно-грузинских отношений. 1919, 10.

[29] Из истории армяно-грузинских отношений. 1919. *Կովկասյան ռազմաճակատի նախկին հրամանատար Ի. Օղիշելիձեն 1918 թ. փետրվար–մարտ ամիսներին հայտնի է Երզնկայի ու Կարինի պաշտպանության ժամանակ իր՝ բացահայտ հակահայկական ու թուրքամետ քաղաքականությամբ: Հանգամանորեն տե՛ս Մ ե լ ի ք յ ա ն. 2019:*

[30] Из истории армяно-грузинских отношений. 1919, 10.

[31] Из истории армяно-грузинских отношений. 1919, 10.

[32] Из истории армяно-грузинских отношений. 1919, 10–11.

[33] *Հանգամանորեն տե՛ս Մ ե լ ի ք յ ա ն. 2010:*

ները – Վ. Մ.), ըստ որի Բորչալուի գավառի 2/3-ը մտնելու էր Հայաստանի սահմանների մեջ, բայց դրա փոխարեն՝ նույն գավառի 1/3-ը բնակեցված էր թաթարներով ու պետք է տրամադրվեր Ադրբեջանին, այդ թվում և Սղնախի գավառի մեծ մասը»[34]: Դրանով, մտքերի փոխանակումն ավարտվում է: Հանձնաժողովի աշխատանքներն այլևս չշարունակվեցին և Վրաստանի ու Հայաստանի միջև համաձայնության չհանգեցրին: Ի դեպ, ՀՅԴ անդամ Ա. Ջամալյանի վկայությամբ, 1917 թ. հոկտեմբեր – 1918 թ. մայիս ժամանակաշրջանում հայկական բոլոր շրջանները, այդ թվում Ախալքալաքն ու հայկական Բորչալուն, ենթարկվում էին բացառապես ՀԱԽ-ին[35]:

Այն, որ վրացական կառավարությունը վճռականորեն ու մեծ ախորժակով պատրաստվում էր գավթել հայկական տարածքները, որտեղ, ընդհանրապես, վրացիներ չեն բնակվել, դա կայացած իրողություն էր: Մինչև հունիսի 11-ի գործընթացը պարզվում է՝ դեռևս հունիսի 8-ին արդեն ՎԴՀ կառավարության նախագահի հրամանով Գերմանիայի ռազմական առաքելության պետին հաղորդվում էր, որ «Վրաստանի կառավարությունը կարգադրել է զբաղեցնել Անդրկովկասյան երկաթուղու դեպի Բաքու ընթացող տարածքը, մինչև Կուր գետի կամուրջը՝ Փոյլի կայարանի առջևում, իսկ Ալեքսանդրապոլի տեղամասում՝ մինչև Ջաջուռի թունելի կեսը, Ղարաքիլիսա և Շահալի (Վահագնի – Վ. Մ.), չնայած 1783 թ. կնքված Վրաստանի և Ռուսաստանի միջև կնքված պայմանագրով (Գեորգիևյան – Վ. Մ.) վրացական նախկին թագավորության սահմանը նշված գծից էլ այն կողմ է ընկնում»[36]:

ՀԱԽ-ը[37] բողոքեց այդ որոշման դեմ, ինչը հրապարակվեց «Պայքար» թերթում: Այն հիմնվում էր կարևորագույն այն մոտեցման վրա, որ երկու հարևան հանրապետությունների միջև համաձայնություն չի կայացել, ուստի «միակողմանի որոշմամբ Վրաստանի կառավարությունը չի կարող սահմանային հարց լուծել, այդ սահմանները պետք է հաստատվեն Վրաստանի և Հայաստանի միջև համաձայնության պայմանագրով: Վրաստանի կառավարության որոշումը հակասում է դեմոկրատական սկզբունքներին, որոնց հիմքում ընկած է ժողովուրդների ինքնորոշման և էթնիկական սկզբունքը, որով և մինչ այժմ առաջնորդվել է Կովկասի դեմոկրատիան»[38]: «Հորիզոն»-ը որոշումը որակեց որպես «վտանգավոր ճանապարհ»[39]:

Բաթումի պայմանագրի հոդվածները կյանքի կոչելու և Կ. Պոլսում մեկ ամիս անց այն վավերացնելու գործընթացի համատեքստում, անչափ ուշագրավ է այդ օրերին օտոմանյան բանակների գլխավոր հրամանատար, գեներալ լեյտենանտ Ֆերիկ Մեհմեդ Վեհիբ փաշայի գաղտնի գրության բովանդակությունը՝ ուղղված Հայոց ազգային կորպուսի հրամանատար, գեներալ Թովմաս Նազարբեկյանին: Ոմն Ա. Մակեդոնսկին այն ուղարկել էր նաև Կով-

[34] Из истории армяно-грузинских отношений. 1919, 11.

[35] *Տե՛ս Մելքոնյան. 2003, 275:*

[36] *Մելքոնյան. 2003, 11:*

[37] *1918 թ. հունիսի 12-ին Կ. Պոլիս մեկնող Ավ. Ահարոնյանին ՀԱԽ-ի նախագահի պաշտոնում փոխարինեց Խ. Կարճիկյանը, իսկ հունիսի 21-ին՝ Ավ. Սահակյանը:*

[38] *Մելքոնյան. 2003, 11–12, նաև՝ «Հորիզոն», 19. VI. 1918:*

[39] *Տե՛ս «Հորիզոն», 15. VI. 1918:*

կայան ռազմաճակատի գլխավոր շտաբի պետ, գեներալ Եվգենի Վիշինսկուն, Մովսես Սիլիկյանին և վերջինիս միջոցով Սարդարապատի ջոկատի հրամանատար Դանիելբեկ Փիրումյանին[40]*: Վեհիբ փաշան հայտնում էր Հայկական կորպուսի հրամանատար Թ. Նազարբեկյանին. «Հայկական և Վրացական պետությունների սահմանները մինչև այժմ չեն որոշված: Ես անհրաժեշտ և անխուսափելի եմ համարում զորքերը (թուրքական – Վ. Մ.) թողնել Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա գծի վրա և այնտեղից հյուսիս՝ մինչև Սադախլո կայարանը ներառյալ: Դա բխում է ձեր շահերից մինչև սահմանի ճշգրիտ հաստատումը: Հավատացեք, որ եթե ես ետ կանչեմ իմ զորքերը, վրացիները կմտնեն ձեր շրջանը և կգրավեն այն: Եթե դուք իմ կարծիքը սխալ եք համարում և կգնաք ավելի հարմար և իրար հետ ավելի հեշտ համաձայնության, ապա իմ կողմից չի լինի ոչ մի արգելք զորքերը ետ քաշելու հարցում: Ես հրամայել եմ նորին գերագանցություն Շևքի փաշային՝ Ղարաքիլիսայից հարավ գրավված տարածքներից մեր զորքերը դուրս բերել: Իմ կորպուսներից մեկի հրամանատար գնդապետ Քյազիմ-բեյ Կարաբեքիրը Ալեքսանդրապոլում սպասում է Ձեր հանձնաժողովին»*[41]*: Մինչդեռ, Թուրքիան Վրաստանից այդ նույն օրերին պահանջեց ժամանակավորապես նահանջել Բաթումի պայմանագրի 2-րդ հոդվածից և թույլ տալ թուրքական զորքերին դարձյալ ժամանակավոր գրաղեցնել Բորչալուի գավառի մի մասը՝ Կամենկա գետով մինչև Քոբեր ու Քոլագերան կայարանները (117-րդ վերստի վրա): Դրանով թուրքերը հնարավորություն էին ձեռք բերում Ղարաքիլիսա-Դիլիջան-Ղազախ մայրուղով զորքերի տեղաշարժման համար: Ստացվում էր՝ Վրաստանը ստիպված ու թուրքերի օգտին ետ էր կանգնում իր հայցած տարածքներից, Թիֆլիսի ամբողջական նահանգից մանավանդ, որ այդ հարցում միջնորդել էր և գերմանական ռազմական առաքելությունը:*

Փաստորեն, 1918 թ. հունիսի 20-ից Լոռվա հարավային մասը, Փամբակը և Բորչալուն գրաղեցվում էր թուրքերի կողմից …

1918 թ. հունիսին Բորչալուի գավառի թաթարական շրջանում, որը գտնվում էր Վրաստանի իշխանության տակ, սկսվեցին մահմեդական-թաթարների ապստամբություններ, որոնց նպատակն էր շրջանն անջատել Վրաստանից և միացնել Ադրբեջանին: Դրանք պատրվակ դարձնելով՝ թուրքական զորքերը փորձեցին մտնել հայկական Բորչալու՝ միանալու ապստամբներին: Արշակ Ջամալյանի կարծիքով, ո՛չ ՀԱԽ-ը և ո՛չ էլ տեղական իշխանությունները չէին կարող կասեցնել այդ շարժումը, ինչը լուրջ վտանգ էր ներկայացնում նաև Թիֆլիսի համար: Այդ վտանգը կանխելու համար վրաց կառավարությունը Փոթիում 1918 թ. մայիսի 28-ին համաձայնագիր ստորագրեց գերմանացիների հետ՝ Վրաստանը նրանց հովանավորության տակ դնելով[42]*: Թիֆլիսում տեղակայված գերմանական փոքր զորամասը համալրվեց վրացիներով և գրավեց Բորչալուի մեծ մասը, նախքան թուրքերն այնտեղ կհասնեին*[43]*:*

---

[40] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 3–4:*
[41] *ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 3–4:*
[42] Пипия. 1971, 34–41.
[43] *Տե՛ս Ջամալյան. 2011, 31:*

Այսքանով սահմանափակվեցին սահմանային հարցում հայ–վրացական կառավարությունների հարաբերությունները. Կ. Պոլսի խորհրդակցությունը ևս արդյունք չտվեց:

1918 թ. հոկտեմբերի 18-ին Սանահին կայարանի մոտ սկսվեց հայ-վրացական ռազմական ընդհարում, որը դեկտեմբերին վերածվեց կարճատև պատերազմի:

Հունիսի 16-ին հետևում է Թ. Նազարբեկյանի ռադիոհեռագիրը Վեհիբ փաշային, նա հայտնում էր, որ ժամը 16[00]-ին Երևանից հատուկ գնացքով Ալեքսանդրապոլ է մեկնել հանձնաժողովը խառը՝ օտոմանյան բանակի հրամանատարության ներկայացուցիչների հետ հաշտության նախնական պայմանագրի հարցերի լուծման նպատակով[44]:

Մեր կարծիքով՝ բավական հետաքրքիր «հակասություն» է ստեղծվում երկու գեներալ-հրամանատարների լրջագույն բանակցությունների ու միաժամանակ, գնդապետ Տ. Բաղդասարովի հունիսի 18-ի հաղորդագրության բովանդակության միջև: Խոսքը վերաբերում էր հունիսի 18–19-ը ընկած հատվածում, զարգացող իրադարձությունների մասին, երբ Ղազախի ճանապարհին՝ Քոլագերան կայարանի մոտ, բախվել էին թուրքական ու գերմանավրացական զորքերը: Սաղախլոյի մարտերից հետո վրացիներն ու գերմանացիները գրավեցին Սանահին կայարանը[45]:

Ստացվում է, որ Վեհիբ փաշայի զգուշացումները վրացական նկրտումների վերաբերյալ լիովին արդարացված էին: Հունիսի 16-ի գիշերը ժամը մեկին հանձնաժողովը հասավ Ալեքսանդրապոլ, որի կազմում էին գեներալ Վաղարշակ Տեր-Հակոբյանը, գնդապետ Իոսիվ (Հովսեփ) Քիշմիշյանը, փոխգնդապետ Ալեքսանդր Վեքիլյանը, Մկրտիչ Մուսինյանը, Կոնստանտին Թամամշյանը և Հովհաննես Մելիքյանը: Հունիսի 16-ից մինչև հուլիսի 3-ը հանձնաժողովը կիսաբանտարկված, բայց կենցաղային «շքեղ» պայմաններում անցկացրեց[46]: Հունիսի 25-ին նահանգապետ Ռաֆաել բեյը հայտնեց, որ Սարդարապատի մոտ հայերը հարձակում են իրականացրել, սպանել են 7 հոգու, վիրավորել՝ 27-ին, ուստի և դրանով բացատրեց հանձնաժողովի մեկուսացված «անվտանգ» կարգավիճակը:

Ալեքսանդրապոլում կայացան 5 պաշտոնական նիստեր՝ հունիսի 19-ին, 20-ին, 22-ին, հուլիսի 5-ին և 6-ին: Թուրքերի կողմից մասնակցում էին Կովկասյան առաջին կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր բեյը, մայոր Ավնի բեյը, կապիտան Հալիլ բեյը, սպա Սալահէդդինը: Նախագահում էր Քյազիմ Կարաբեքիրը: Առաջին նիստին հիմնվելով Բաթումի պայմանագրի վրա՝ թուրքերը պահանջեցին. 1. հանձնել Երևանի շրջանում գտնվող երկաթուղային շոգեքարշներն ու վագոնները, 2. հայկական զորքերը հետ քաշել Բաշ-Ապարանի ճակատից և կարգ ու կանոնի պաշտպանության համար այնտեղ թողնել փոքրաթիվ զորաջոկատ, 3. թույլ տալ Դիլիջանի վրայով թուրքական զորքերի, ինչպես և թուրքական փոստի անցումը: Այս պահանջներին

[44] *Ջամալյան. 2011, 8:*

[45] *Ջամալյան. 2011, 9: Տե՛ս նաև՝* Allen, Muratoff. 1953, 477–478; Махмурян. 2019, 90–91; *Մախմուրյան. 2020, 18:*

[46] *Հանգամանորեն տե՛ս Ա.-Դ. 2019, 459–465:*

տրվեցին բավարարող պատասխաններ: Պարզվում է, որ՝ 1. հունիսի 24-ին կամ 25-ին Սարդարապատի մոտ հայկական կողմը նոր գրոհ է իրականացրել, 2. մինչև հունիսի 16-ը Բաշ-Ապարանում կանգնած են եղել հայկական զորքեր, 3. Դիլիջանով թուրքական զորքեր ու փոստ տեղափոխելու խնդիրն էլ առաջացել էր այն պատճառով, որ Թ. Նազարբեկյանի խնդրանքով գեներալ Անդրանիկը հունիսի սկզբին իր Առանձին հարվածող զորամասով ամրացել էր Դիլիջանում՝ ապահովելով թուրքական կործանարար շրջանցի կանխումը դեպի Երևան:

Հայ ներկայացուցիչները պահանջեցին. 1. թույլ տալ արևմտահայ փախստականներին վերադառնալ իրենց բնակավայրերը և 2. Ղարաքիլիսայից դուրս բերել թուրքական զորքերն ու շրջանը հանձնել հայկական կառավարությանը: Քյազիմ Կարաբեքիրը պատասխանեց, որ առաջին պահանջի կապակցությամբ կդիմի թուրքական բարձր հրամանատարությանը և կպասի նրա ցուցումներին, իսկ երկրորդ պահանջի առթիվ նշեց այն, ինչ գրում էր Վեհիբ փաշան Թ. Նազարբեկյանին. այսինքն՝ վրացիներն ուզում են մտնել նաև Շահալի կայարան՝ համարելով այն իրենց սահմանը:

Հաջորդ երեք նիստերում քննարկման առարկա դարձավ սահմանագծի խնդիրը, քանի որ հրապարակ էին եկել դաշնագրի երկու օրինակներ (խոսքը վերաբերում է Բաթումի լրացուցիչ դաշնագրին), մասնավորապես՝ Էջմիածնի հարցում: Վերջապես, Էջմիածնից ոչ հեռու գտնվող Քյորփալու հայկական գյուղը որոշվեց կցել Հայաստանի Հանրապետությանը[47]:

Քյազիմ Կարաբեքիրի հարցին՝ հայկական զորքերի զորացման և Բաքվից դրանք հանելու մասին, Ալեքսանդրապոլի հայկական պատվիրակությունը պատասխանեց, որ այդ խնդիրը դուրս է իրենց իրավասությունից: Համաձայն հայկական կողմի հանձնառության՝ Երևանից Գանձակի վրայով թաթար պատվիրակների հետ ՀԱԽ-ը Բաքու ուղարկեց Մ. Արզումանյանին և Մ. Հարությունյանին՝ հայկական զորամասերը Բաքվից հանելու նպատակով: Իբր թուրքերի խորհրդով նրանք չեն մեկնել Բաքու թուրքական զորքի առաջնագծից՝ Մյուսիլի (Քյուրդամիրի մոտ) կայարանից վերադարձել են Գանձակ, այնտեղից՝ Թիֆլիս: Մի քանի օր անց Վլադիկավկազից Բաքու անցնելու փորձը ևս չիրականացավ, քանի որ բոլշևիկները գրավել էին Քյուրդամիրը, Շամախու ողջ շրջանը, Դաղստանի ծովափնյա շրջանները՝ մինչև Պետրովսկ: Կ. Պոլիս մեկնած հայկական պատվիրակությանն ուղղված Ն. Աղբալյանի զեկուցագրում նշվում էր. «Հուսով ենք, որ մեր պատվիրակությունը մի հնար կգտնի խաղաղությամբ լուծելու Բաքվի խնդիրը և փրկելու այդ շատ կարևոր տնտեսությունը»[48]: Պարզվում է նաև, որ Գանձակում հայերին զինաթափել են, հայկական թաղում նշանակվել է թաթար պարետ, և հայկական կոմիտեի շենքի վրա ծածանվում է թուրքական դրոշը[49]: Հայկական կողմը բարձրացրեց նաև Կարս-Էրզրում հատվածում հայ ռազմագերիների և Ալեքսանդրապոլի գավառից քշված 6.000–7.000 հայ տղամարդկանց, ինչպես նաև՝ փախստական հայերին իրենց բնակավայրերը վերադարձնելու հարցը:

---

[47] *Ա.-Դ ո.* 2019, 463:

[48] *Ս ո ւ ք ի ա ս յ ա ն.* 2019, 87:

[49] *Ս ո ւ ք ի ա ս յ ա ն.* 2019, 89:

Թեև առաջին կետին տրվեց դրական պատասխան, բայց ոչ մի հայ զինվոր ու փախստական այդպես էլ չվերադարձան, բացի մի քանի հարյուր հյուծված ու կիսամեռ մարդկանցից: Երկրորդ հարցին պատասխանեց հունիսի 23–24-ն Ալեքսանդրապոլ ժամանած Վեհիբ փաշան, ըստ որի՝ Արդահանի, Բաթումի և Կարսի շրջանի փախստականները չեն կարող վերադառնալ, քանի դեռ այդ շրջանների բնակչության ինքնորոշման հանրաքվեն չավարտվի: Հասկանալի է, որ այդ պահին հիշյալ տարածքներում գերակշռում էին մահմեդականները:

Քյազիմ Կարաբեքիրը մերժեց հունիսի 19-ի հայկական պատվիրակության պահանջը՝ փախստականների վերադարձի մասին՝ հիմնավորելով, որ «հայ և մահմեդական ազգությունների միջև թշնամությունը դեռևս շարունակվում է և 2. Պետք է անմիջապես և պարտադիր բոլոր մահմեդականները Հայաստանից փոխադրվեն Օսմանյան կայսրություն, իսկ Կայսրության սահմաններից էլ քրիստոնյաները փոխադրվեն Հայաստան»[50]:

Աստվածատուր Խաչատրյանի[51] կարծիքով՝ Գերմանիան՝ ի դեմս Լյուդենդորֆի ու Հինդենբուրգի սպառնալից հեռագրերի, Թուրքիայից պահանջում էր զորքերը դուրս բերել Անդրկովկասից, ուստի և թուրքերն այս առումով անորոշ կացության մեջ էին: Այդ պատճառով նրանց ավանդական ձգձգելու քաղաքականությունն Ալեքսանդրապոլում էլ իր դերը խաղաց և հանձնաժողովի առջև դրված չորս խնդիրներն էլ վերջնականապես լուծում չստացան: Այդ մասին է վկայում հուլիսի 13-ին կազմված հանձնաժողովի տեղեկագիրը: Երկու կողմն էլ համաձայն էին արձանագրել. «…քանի որ Բաթումի հաշտության պատվիրակության և Պոլսի կոնֆերանսի որոշումներն ու համաձայնությունները պետք է վճռական նշանակություն ունենան, այդ պատճառով պետք է չեղյալ համարել Ալեքսանդրապոլում օսմանյան և հայկական հանձնախմբի հինգ տեղեկագրերում գտնված որոշումներն ու համաձայնությունների այն կետերը, որոնք ամբողջությամբ կամ մասնակի պիտի չհամապատասխանեն կամ հակառակեն Բաթումի պատվիրակության կամ Պոլսի ժողովի որոշումներին կամ համաձայնությանը»[52]:

Հարց է առաջանում, թե Ալեքսանդրապոլում գործող հայ-թուրքական հանձնաժողովի ընդունած ո՞ր որոշումները պետք է չեղյալ համարվեին: Արխիվային նորահայտ փաստաթղթերը որոշակի լույս են սփռում այն իրադարձությունների վրա, որոնք զարգանում էին հետբաթումյան Հայաստանում և բացահայտում մինչև 1918 թ. հուլիսի վերջը թուրքական ռազմական ակտիվ ներկայության փաստն անկախ Հայաստանում:

Հուլիսի 11-ին ՀԱԽ-ը, դիմելով Թ. Նազարբեկյանին, հայտնում է, որ հուլիսի 9-ին քննել է նրա որոշումը՝ Թազաքենդից ու Աղբաշայից ետ քաշվելու վերաբերյալ և պարզել՝ այդ վճիռը չի բխել ռազմավարական նկատառումներից, այլ եղել է զուտ քաղաքական քայլ: ՀԱԽ-ը կարծում էր, որ նպատակը

---

[50] *Տե՛ս Ա.-Դ. 2019, 464–465:*

[51] *Լեզվաբան, մանկավարժ, կուսակցական (ՀՅԴ անդամ՝ 1906–1922 թթ.) ու հասարակական գործիչ, Փարիզի ազգային համագումարի պատվիրակ: 1925 թ. պրոֆ. Ա. Խաչատրյանն ընտրվել է ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի իսկական անդամ:*

[52] *Տե՛ս Խաչատրյան. 2010, 107:*

Թ. Նազարբեկյանի կողմից Ալեքսանդրապոլի հանձնաժողովին տրված ՀԱԽ-ի հուլիսի 8-ի որոշմանը (որին ներկա էր Թ. Նազարբեկյանը) հակասող գեներալի գրավոր խոստումը փրկելն էր, այն է՝ պաշտպանել նշված սահմանը: ՀԱԽ-ը որոշում է. 1. «ափսոսանք հայտնել մեր զորքերի ետ քաշվելու կապակցությամբ, ինչը տեղի է ունեցել թուրքական զորքերի ճնշման պայմաններում, որը և հաշտության պայմանագրի խախտում է», 2. ՀԱԽ-ն այլևս չի հանդուրժի նման գործողություններ, որոնց պետք է հասցվի հզոր հակահարված և 3. խնդրում է Թ. Նազարբեկյանին ընդունել բոլոր միջոցները՝ հայկական զորքերը մարտական պատրաստվածության մեջ պահելու ուղղությամբ[53]*:*

Հուլիսի 17-ին էլ ՀԱԽ-ը դիմում է Նոր Բայազետի ազգային խորհրդին և խնդրում՝ «շտապ, Դարալագյազ (Եղեգնաձոր), Յապոնին (Հովհաննես Պարոնյան-Յապոնացի Սաքո – Վ. Մ.) ուղարկել հետևյալ հեռագիրը. հաղորդում եմ ձեզ կատարման համար՝ Ալեքսանդրապոլի հայ-թուրքական հանձնաժողովի տեղեկությունը դեմարկացիոն գծի վերաբերյալ: Քարտեզի վրա որոշվել է Սարդարապատի ուղղության դեմարկացիոն գիծը, 5 վերստի վրա: Հայկական զորքերը չպետք է առաջ անցնեն հետևյալ գյուղերից հարավարևելք-Բայրամլի, Խզնաուզ, Քյուրաքլու, Քյորփալու, Ալիբեկլյու, Կալարա, Նորագավիթ, Ջանադլու, Ջաթմա, Դախնազ, Երանոս, Արշիկ, Գորտուն և Ելցին: Իսկ թուրքական զորքերն էլ չէին անցնելու նույն գիծը՝ իրենց տնօրինության տակ պահելով Քայթուլ, Զեյվա, Այլանլու, Կարաշիմաղ, Քաչապարաղ, Ենգիջա, Թազաքենդ, Աղբաշ, Դվին, Շութալքենդ, Աղդամլար, Թաշլու, Կարաբաքլար, Ներքին Շալաբլու, Կարիդ, Արդալազ և Ալչաքու, Գևանդ գյուղերը»[54]*: Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ուղղություններով սահմանը ժամանակավոր, բայց նույնն էր թողնվում, մինչև կլուծվեր Վրաստանի և Ադրբեջանի սահմանի հարցը:*

Ընդհանուր պատկերն ամբողջացնում է Դարալագյազի Առանձին պարտիզանական գումարտակի հրամանատար Յապոնի գործունեության սկզբնական դրվագներից մեկը, տվյալ դեպքում՝ Արամ Մանուկյանի հետ նամակագրական կապի միջոցով որոշ սահմանային խնդիրների մանրամասների փոխանցումը[55]*: Հուլիսի 31-ին Մխալազ վանքից Յապոնը գրում էր Արամին, թե ստացել է նրա հուլիսի 25-ի նամակը և կշտամբում՝ «դու գրում ես, որ իբր թե հարյուր, հազար անգամ գրել եք սահմանների մասին և հրահանգել եք մեզ կանգնել մեր սահմանների վրա, դուք մեր գիտակցության և անհասկացողության վրա եք զարմանում, իսկ մենք զարմանում ենք, որ դուք հազարավոր անգամ գրում եք սահմանների մասին, բայց ամեն անգամ էլ միայն նույնը կրկնում*[56]*:*

Նախքան Զնգրլովի դեպքերը, այդ մասին ոչինչ չգիտեինք. մենք համոզված էինք, որ հաշտությունը խախտված է. այդ դեպքերից անմիջապես հետո իմացանք, որ ձեր սահմանը մինչև Արփա գետն է հասնում. իսկ այնուհետև, մի՞թե Արփայից դենը սահման գծելու պետք չունիք: Եթե դուք պետք

---

[53] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 373:*

[54] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 373:*

[55] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382–389: Ա. Մանուկյանն այս նամակը ստացել է 1918 թ. նոյեմբերի 14-ին:*

[56] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382:*

չեք զգում, մեզ համար խիստ կենսական է այդ հարցը, որովհետև Արփաչայ (Արփա – Վ. Մ.) գետի մյուս կողմում կան 14–15 հայկական գյուղեր, որոնք խարխափում են տարտամության մեջ»[57]: Յապոնն ուզում էր պարզել շատ կոնկրետ հարց, այսինքն՝ եթե «այդ կողմի սահմանը պարզ է», ապա ինքն ակնկալո՞ւմ էր հստակ հրահանգ Երևանից այդ տարածքի հայ գյուղացիներին Արփայի մյուս ափը իրենց ցորենով անցկացնելու վերաբերյալ:

Զափազանց կարևոր ու արդիական էր Յապոնի հարցադրումն այն մասին, թե «շատ անհրաժեշտ է մեր երկրամասի լրիվ սահմանները գիտենալ»[58], քանի որ համեստորեն ներկայացվող տողերի արանքում բացահայտվում է նրա իրականացրած վիթխարի ու հերոսական աշխատանքը: Ըստ այդմ՝ Յապոնը ռմբակոծությամբ ջախջախել էր Ղոզլջայի թուրքական ավազակախմբերին, տեղում բնակեցրել Ղարախաչի հայ գաղթականությանը: Խմբապետ Արսենի առաջարկությամբ՝ անցնող զորքերին թալանելու, ճանապարհին ավազակություններ, սպանություններ անելու պատճառով, զինաթափվելու պահանջ էր ներկայացրել Սալլի և Ղշլաղ գյուղերի մահմեդական բնակչությանը: Այդ նպատակով Յապոնն ուղարկել էր կոմիսար Հայրիկ Տեր-Ավագյանի միլիցիայի ջոկատը, որի զինաթափվելու պահանջը մերժվել էր և վերոհիշյալ գյուղերի մահմեդականներն իրենց զենքով փախել էին սարերը: Յապոնը նաև ընդհանրացնում էր՝ «զինաթափ լինելու առաջարկիս չհամաձայնվելու ու բոլոր փորձերից եզրակացնել կարելի է, որ թրքությունը (մեր սահմաններում եղած) ոչ մի տեղ զինաթափ լինելու տենդենց չի ցույց տալիս, ընդհակառակը, ամեն տեղ զինված դիմադրություն ենք գտնում, այդ պատճառով էլ շատ դեպքերում ստիպված եմ զենքի ուժի դիմելու... Շարունակում եմ մեր Զանգեզուրի արանքում ընկած բոլոր գյուղերի զինաթափ անելու գործը: Դրանցից գլխավորը և առաջինը Հերհերն է: Հերհերի օպերացիայից հետո ես կամ Նորայրը կգանք Երևան»[59]:

Յապոնը հաղորդում էր նաև Արամին՝ Անդրանիկի և Նախիջևանի հետ կապ չունեն, ենթադրում են, որ նա Ագուլիսի կողմերում է, Մեղրիից Ղարաբաղ անցած լինել չէր կարող, քանի որ Գորիսից ստացված նամակն էլ չէր պարզում գեներալի գտնվելու վայրը: Գորիսից հայտնում էին՝ այնտեղ է խմբապետ Մանուկը, ով հետո անցնելու է Սիսիան, Կապան և Զանգեզուր՝ տեղական ուժերի ինքնապաշտպանությունը «ամուր հողի վրա դնելու»: 7.000 գաղթականության մի մասը Գորիսից անցել էր Շուշի: Ղարաբաղում պատրաստվում էր դիմադրել Արմեն Սասունին[60]: Այսպիսով, պարզ է դառնում, որ գոնե մինչև 1918 թ. հուլիսի վերջը, Բաթումի պայմանագիրը հայկական կողմի համար գրեթե չէր գործում, թուրքական զորքերը չէին հեռանում գծված սահմաններից, Հայաստանում չէին դադարում մահմեդական զինված խռովությունները, տիրում էր կատարյալ անիշխանություն: Եվ այս ամենին զուգահեռ՝ չէր լուծվում իշխանության հաստատման խնդիրը:

Հայաստանի Ապահովության խորհրդի անդամ Մ. Մուսինյանի ամփոփումն արդիական է, հատկապես՝ Արցախյան հիմնահարցի համատեքստում.

[57] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382:
[58] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382:
[59] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382:
[60] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382:

«Օր չէր լինում, որ գրավոր կամ բերանացի դիմում չանեին (թուրքական կողմը – Վ. Մ.) ու չհայտարարեին, թե հայ զորամասերը, հայ զինված բանդաները և տեղական հայ բնակիչները հարձակվում են տաճիկ զորքերի վրա, թե Հայաստանի սահմաններում մինչև օրս էլ շարունակվում են հալածանքները մահմեդականների դեմ և այլն: Եվ այս բոլորը նրա համար, որ մեզ վրա ճնշում գործ դնեն, որ արդարացնեն իրենց գործողությունները և հող պատրաստեն իրենց հետին նպատակներն իրագործելու համար»[61]*: Դրան զուգահեռ՝ Ն. Աղբալյանը վկայում է, որ «Շուշիում ևս թուրք պարետ կա, հայերը պահում են Ասկերանը և տաճիկները երես չեն տալիս տեղական թուրքերին և հայերի վերաբերմամբ շատ կօրեկտ են»*[62]*:*

Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության (ԱԴՀ) և Օսմանյան Թուրքիայի միջև Բաթումի պայմանագիրը ստորագրեցին ԱԴՀ Ազգային խորհրդի նախագահ Մ. Ռասուլզադեն և ԱԳ նախարար Մ. Հաջինսկին, Թուրքիայի կողմից՝ արդարադատության նախարար ու պետական խորհրդի նախագահ Հալիլ Մենթեշեն և Կովկասյան ռազմաճակատի օսմանյան բանակների հրամանատար Ֆերիկ Մեհմետ Վեհիբ փաշան: Պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ Թուրքիան Ադրբեջանի դիմումի դեպքում երկրում «կարգ հաստատելու համար իրավունք ունի զինված ուժով միջամտելու»[63]*: ԱԴՀ-ն պարտավորվում էր երկրից վտարել Թուրքիայի հետ պատերազմող երկրների բոլոր սպաներին ու պաշտոնյաներին, ինչպես նաև սահմանամերձ տարածքներից հեռացնել զինված խմբավորումները: Պայմանագրով կարգավորվում էին նաև կողմերի միջև առևտրատնտեսական, հյուպատոսական, փոստ-հեռագրային հարաբերությունները: Նույն օրը՝ հունիսի 4-ին, Բաթումում ստորագրված եռակողմ թուրք-վրաց-ադրբեջանական պայմանագրով սահմանվում էին Բաքու-Բաթում նավթամուղի վերագործարկման պայմանները: Երկկողմ ժամանակավոր պայմանագրով Ադրբեջանը նաև պարտավորվում էր «իր» երկաթուղիներով թուրքական բանակի զորամասերի ու սպառազինության փոխադրումը: Երկաթուղային հանգույցներում տեղակայվելու էին թուրք սպաներ, և ԱԴՀ երկաթուղային ցանցն անցնում էր Թուրքիայի վերահսկողության տակ*[64]*:*

Անդրադառնալով Ադրբեջանի անկախության գործընթացին՝ ընդգծենք հռչակագրի առաջին կետը, ըստ որի «Ադրբեջանը բաղկացած է արևելյան և հարավային Անդրկովկասից», այսինքն՝ ըստ «Кавказское слово»*-ի դիպուկ արտահայտության՝ «Ադրբեջանի մեջ պետք է մտներ այն ամենը, ինչը չէր մտնում Վրաստանի մեջ»*[65]*:*

Ստանալով Թուրքիայի բաղձալի աջակցությունը՝ Կովկասի մահմեդական թաթարները վստահաբար սկսեցին նաև իրենց «թուրք» անվանել: Այդ առումով հիշարժան է Թիֆլիսի «Թուրքական ազգային կոմիտեի» որոշումը:

---

[61] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3-րդ, թ. 382:*
[62] *Տե՛ս Սուքիասյան. 2019, 89:*
[63] *«Հորիզոն», 06. VI. 1918:*
[64] *Կնյազյան. 2008, 25–26:*
[65] «Кавказское Слово» (Тифлис), 01. VIII. 1918.

Բաթումի պայմանագրից անմիջապես հետո՝ հունիսի 5-ին, այդ խորհրդի նիստը բանաձև ընդունեց.

1. «Նկատի ունենալով ստեղծված կացությունը, Թիֆլիսի թուրքական ազգային կոմիտեն ճանաչում է Ադրբեջանի անկախությունը: Ինչ վերաբերում է թուրքական ազգային կենտրոնական խորհրդին, որ ճնշող մեծամասնությամբ կազմված է Մուսավաթ կուսակցության անդամներից, որոնք երկիրը կործանեցին ու հասցրին ներկա դրությանը (նկատի ունի, մասնավորապես, Բաքվի մարտյան խռովության պարտությունը – Վ. Մ.), Թիֆլիսի ազգային կոմիտեն իր անվստահությունն է հայտնում կենտրոնական խորհրդին և առաջարկում է նրան չխառնվել Վրաստանի հասարակապետության մեջ մնացած թուրքերի գործերին:

2. Թիֆլիսի թուրքական ազգային կոմիտեն իրեն հայտարարում է Վրաստանի հասարակության մեջ գտնվող թուրքերի ժամանակավոր ազգային խորհուրդ և իր վրա է վերցնում մոտիկ ապագայում Վրաստանի թուրքերի ազգային համագումարի հրավիրման նախաձեռնությունը[66]*:*

3. Նկատի առնելով այն անիշխանությունը, որ տիրում է Արևելյան Անդրկովկասում, կոմիտեն Ադրբեջանի հասարակապետության կառավարությանն առաջարկում է անմիջապես մեկնել գավառները՝ պաշտպանելու Ադրբեջանի քաղաքացիներին»[67]*:*

Թիֆլիսի թուրքական ազգային կոմիտեի «Ալ-Բայրաք» լրագիրը հրապարակել էր «Մուսավաթիստները» վերտառությամբ հոդված: Կոմիտեն, մեղադրելով Գանձակի կենտրոնական ազգային խորհրդին և նրա գործունեությունը համարելով «Անդրկովկասի թուրք ժողովրդի կործանման պատճառ»՝ մասնավորապես նշում էր, որ «եթե Շամքորում չվառեր հրդեհը (Կովկասյան բանակի նահանջող ռուս զինվորների զինաթափումը և կոտորածը 1918 թ. հունվարին – Վ. Մ.), չէր էլ կործանվի ոչ Բաքուն, ոչ էլ Շամախին: Ապացույցն այն է, որ եթե Գանձակի ազգային կոմիտեն ժամանակին չփակեր Բաքվում հավաքված հայ էշելոնների ճանապարհը, ապա նրանք չէին մնա Բաքվում փակված, ու նրանք չէին հակվի դեպի բոլշևիկները ու չէին հարձակվի Բաքվի խեղճ թուրք ժողովրդի վրա, կամ Բաքվից չէին անցնի Շամախի և Շամախին իր ամբողջ գավառով չէին ավերի»[68]*:*

Հիմնականում օբյեկտիվ եզրահանգումները կեղծվում են փոքր թվացող, բայց ամենաէական հարցադրմամբ, այն է՝ «Բաքվի խեղճ թուրք ժողովրդի վրա» ոչ թե հայերն ու բոլշևիկներն էին հարձակվել, այլ հենց իրենց գլխավոր ընդդիմախոս Մուսավաթը, որը կազմակերպել էր խռովություն՝ Բաքուն գրավելու, Ադրբեջանի մայրաքաղաք դարձնելու, Բաքվի խորհրդի իշխանությունը տապալելու և հայկական տարրի ոչնչացման նպատակով:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել. 1. անմիջապես ի հայտ է գալիս նորաստեղծ «Ադրբեջանին» տեր կանգնելու վստահ միտումը, որի առաջամարտիկ է դիտարկվում Օսմանյան Թուրքիան, 2. վերջինիս ուղղակի աջակցությամբ խնդիր է դրվում վերջ տալ Արևելյան Անդրկովկասի «անիշխա-

[66] *Հանգամանորեն տե՛ս* Մ ե լ ի ք յ ա ն. *2018,* Меликян. 2019.
[67] *«Հորիզոն», 05. VI. 1918:*
[68] *«Հորիզոն», 21. VI. 1918:*

նությանը», այսինքն՝ Բաքվի հայամետ բոլշևիկյան իշխանությանը և 3. Թիֆլիսից հնչող «նոր թուրքերի» այս համարձակ տոնը ենթադրում էր վրացթաթարական կայուն դաշինքի հակահայկական ուղղվածությունը, որն ավելի էր ամրապնդվել թուրք-գերմանական հովանավորության տեսքով:

Վերոնշյալի առումով թերևս միակ թույլ տեղն Ախալցխայի ու Ախալքալաքի գավառների պատկանելիության հարցն էր: Հունիսի 3-ի երեկոյան ժամը 11-ին Բաթումում Վրաստանի և Թուրքիայի միջև ստորագրված հաշտության պայմանների համաձայն այդ երկու գավառների որոշ մասեր անցնում էին Թուրքիային: Վրաստանին էր թողնվում հարևան Աբասթումանը[69]: Որպես պատրվակ՝ ընդունվում էր տեղի մահմեդական բնակչության նկատմամբ կիրառվող հալածանքները: Դեռ մայիսի 16-ին՝ Անդրկովկասի անկախ հանրապետության օրոք, կովկասյան օտոմանյան բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ Մեհմեդը Վրաստանի կառավարության նախագահ Ա. Չխենկելիին թուրքերենով հայտնում էր՝ «վերջին շրջանում Ախալցխայի ու Ախալքալաքի գավառների մահմեդական բնակավայրերում տուժածների ցուցակը»[70]: Դա օգտագործելով՝ Բաթումի խորհրդաժողովին են ներկայանում այդ գավառների մահմեդական պատվիրակները՝ իրենց անհանգստացնող պահանջներով: 6 կետից բաղկացած և 40 հոգու կողմից ստորագրված պետիցիան թաթար-մահմեդականների կարծիքով լիովին հիմնավորում էր Ախալցխայի ու Ախալքալաքի գավառների Օսմանյան Թուրքիային պատկանելիության խնդիրը[71]: Միաձայն որոշվում է. խնդրել թուրքական կառավարությանը հաշտության պայմանագրով իրենց միացնել ամբողջ Ախալցխայի գավառը և Ախալքալաքի գավառի մի մասը: Նրանք հայտնում էին նաև, որ մերժման դեպքում իրենք մինչև վերջին փամփուշտը կկռվեն ինքնորոշման համար[72]:

Ընդգծենք, որ, ի տարբերություն վրաց ազգայնականների, թաթար-մահմեդական պատվիրակները, փաստորեն, հրաժարվում էին Ախալքալաքի գավառի հայկական զգալի մասից:

Թաթարները «հրաժարվում» էին, բայց գրավում էին թուրքերը. հունիսի 3-ին Ախալքալաքի գավառի Զամտուրա գյուղի համայնքի ներկայացուցիչ Սարգիս Աբելյանցը տեղեկացնում էր ՀԱԽ-ին, որ «թուրքերն արդեն գրավել են Ախալքալաքը. քաղաքը այրվում է, զինվորները բարոյալքված են, չեն կռվում»[73]:

Ինչ վերաբերում էր Ղարաբաղին, ապա հայտնի է դառնում՝ նախ՝ 1918 թ. հունիս 13-ին Թիֆլիսում կայացել էր Հայկական և Ադրբեջանական ազգային խորհուրդների նիստ՝ նվիրված Հայաստանի և Ադրբեջանի տարածքային սահմանազատման հարցին: Ադրբեջանի ազգային խորհուրդը, փաստորեն, մերժելով Թիֆլիսի ժողովի որոշումը՝ հայտարարել էր՝ Ղարաբաղի և Հայաստանի Արևելյան Սահմանների հարցը քննարկվելու է Մահմեդական

---

[69] *«Հորիզոն», 05. VI. 1918:*

[70] НАГ, ф. 1818, оп. 2, д. 276, л. 29.

[71] Кариби (П. Гелешвили). 1920, 161.

[72] Кариби (П. Гелешвили). 1920, 161–162.

[73] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 82:*

ազգային խորհրդում, որից հետո կվերսկսվեն բանակցությունները: ՀԱԽ-ը պարզապես խնդրում էր տեղյակ պահել, թե երբ են վերսկսվելու նշված բանակցությունները[74]*:*

1918 թ. հունիսի 12-ին «Արցախի և Սյունիքի Հայրենակցական միության»[75] *վարչությունը, դիմելով ՀԱԽ-ին, հայտնում էր. «Նկատի ունենալով, որ ներկայումս որոշվում է երկու հայաշատ երկրների վիճակը, պարտք համարեց Թիֆլիսում գումարել ձեռնահաս հայրենակիցներից մի խորհրդակցություն»*[76]*:*

Հունիսի 14-ին Թիֆլիսի Վաճառականական բանկի շենքում ՀԱԽ-ի անդամ Տիգրան Բեկզադյանի նախագահությամբ կայացավ այդ խորհրդաժողովը, որը, բազմակողմանի քննության ենթարկելով խնդիրը և «նկատի առնելով, որ չկա ոչ մի պատմական, աշխարհագրական, քաղաքական և ազգագրական հանգամանք, որ զորավոր լիներ Արցախի և Սյունիքի հայաբնակ մասերը Հայաստանի անկախ հանրապետությունից կտրելու համար, միաձայն որոշեց. 1. Անպայման անհրաժեշտ համարելով, որ Հայոց երկրի վերոհիշյալ մասերը միացվեն Հայաստանին, 2. Խնդրել Ազգային խորհրդից, որ նա Ադրբեջանի ազգային խորհրդի հետ մղած բանակցությունների մեջ անպայման պահանջե, որ այժմյան Ղարաբաղը իր բոլոր հայաբնակ գավառներով (Ջրաբերդ, Խաչեն, Վարանդա, Դիզակ, Գյուլիստան) և Զանգեզուրը համարվեն Անկախ Հայաստանի անբաժանելի մաս»[77]*:*

Ժողովում ընտրվեց նաև երեք հոգուց բաղկացած հանձնաժողով՝ Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Շահնազարյանի, Առաքել Բաբախանյանի (Լեո) և Միքայել Ղարաբեկյանի մասնակցությամբ: Հավելենք, որ Հայրենակցական միության վարչության նախագահն անվանի պատմաբան Լեոն էր[78]*: Սա Արցախի ինքնորոշման գործընթացում, թերևս, առաջին փաստաթուղթ-իրավական հիմքն է. այն հրապարակվում է առաջին անգամ:*

Այդ նույն օրն Ադրբեջանի Մահմեդական ազգային խորհուրդը պատասխանում է հունիսի 13-ի հայկական ու ադրբեջանական ազգային խորհուրդների նիստի սահմանազատման խնդիրներին, որ նախորդ օրը կայացած խորհրդակցության ժամանակ, որտեղ ՀԱԽ-ից մասնակցել են Մ. Պապաջանյանը, Ս. Հարությունյանը (ՀԺԿ), կայացել է բանավոր համաձայնություն և Ղարաբաղի հարց ընհանրապես չի բարձրացվել. «Այժմ Ադրբեջանի ազգային խորհուրդը քննարկելով ՀԱԽ-ի նոր առաջարկը Ղարաբաղի մասին, կտրականապես մերժեց այդ առաջարկը,– ասվում էր փաստաթղթում,– գտնելով, որ Ադրբեջանի և Հայաստանի միջև տարածքային սահմանների վերաբերյալ բոլոր բանակցությունները կարող են ընթանալ միայն հունիսի 13-ի համաձայնության սահմաններում և դրա հիմքի վրա: Ինչ վերաբերում է սահմանային գծի հաստատմանը, ապա դա կարող է դառնալ Ադրբեջանի և

[74] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 20:*

[75] *Փաստաթղթի կնիքի վրա մակագրված է՝* «Союз армян Карабаха и Зангезура».

[76] *ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 41–42:*

[77] *ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 41–42:*

[78] *ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 41–42:*

Հայաստանի կառավարությունների կողմից ձևավորված հատուկ հանձնաժողովների քննարկման առարկա»[79]:

Մեզ համար անհայտ է մնում հունիսի 13-ի «բանավոր համաձայնության» բովանդակությունը: Ակնհայտ է, որ հանդիպմանը մասնակցել են ՀԺԿ-ի վերոհիշյալ ներկայացուցիչները:

Հունիսի 25-ին Թիֆլիսում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Ջաֆարովը ՀԱԽ-ին հայտնում էր, որ «ներկայումս Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը ձեռնամուխ է եղել իր պետական սահմանների որոշմանը, ուստի իմ պարտքն եմ համարում այդ հարցի շուրջ մեր հարևան բոլոր պետությունների, այդ թվում և Հայաստանի հետ նախնական հարաբերությունների մեջ մտնել»[80]: Այդ նպատակով նա առաջարկում էր ստեղծել «Ադրբեջանա-հայկական սահմանաբաժանման հանձնաժողով»: Համաձայնության դեպքում առաջարկվում էր ՀԱԽ-ին նշել հանդիպման վայրը և ժամկետը. Մ. Ջաֆարովն առաջարկում էր Ելիզավետպոլը (Գյանջա)[81]:

Նորահռչակ Հայաստանի տարածքային հարցն առաջին անգամ պաշտոնապես լսվել է ՀԱԽ-ում 1918 թ. հունիսի 1-ին, երբ դեռ քննարկվում էր Հայաստանի Հանրապետության անկախության հայտարարման ձևն ու բովանդակությունը: ՀԱԽ-ի նիստում Ավ. Ահարոնյանը բարձրացնում է «Սահմանափոխման հարցը»: Կանխելով կարծիքների բազմազանության հնարավորությունը, ինչպես, օրինակ, Ռ. Տեր-Մինասյանի մտահանգումն էր, թե «օսմանցիները ցանկություն ունեն մեր սահմանները լայնացնելու հյուսիսից»՝ Խ. Կարճիկյանը «խնդիրը վերջացած է համարում, առաջարկում է «պետության» քարտեզը գծել». որոշվում է «Պետության» քարտեզի գծումն ու մշակումը հանձնարարել Գ. Խատիսյանին, Ս. Կամսարականին և գեներալ Մ. Արեշյանին[82]: Նկատենք, որ պետություն եզրույթն առայժմ չակերտների մեջ էր առնվում: Հայաստանի Հանրապետության անունից Բաթումի պայմանագիրը ստորագրեցին Ալ. Խատիսյանը, Հ. Քաջազնունին ու Մ. Պապաջանյանը, Օտոմանյան կայսերական կառավարության կողմից՝ Հալիլ բեյը և գեներալ-լեյտենանտ Ֆ. Վեհիբ փաշան:

Պայմանագրի 2-րդ հոդվածով գծվում էր հայ-թուրքական սահմանը: 3-րդ հոդվածով ՀՀ և ԱԴՀ միջև փոխադարձ սահմանի մասին համաձայնության բանաձևը պետք է տեղյակ պահվեր Թուրքիային: 4-րդ հոդվածով Օտոմանյան կառավարությունը «պարտավորվում էր ՀՀ կառավարությանը օգնություն ցույց տալ զենքի ուժով, եթե վերջինս խնդրի երկրում կարգ ու հանգստություն ապահովելու համար»[83]: 5-րդ տխրահռչակ հոդվածը նախատեսում էր, որ «ՀՀ կառավարությունը պարտավորվում է գործնականորեն հակադարձել, որպեսզի իր տարածքում ոչ մի բանդա չձևավորվի և չզինվի, ինչպես նաև զինաթափել և ցրել բոլոր բանդաները, որոնք կգան այնտեղ

---

[79] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 25:*

[80] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 23:*

[81] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 23:*

[82] *Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս). 2009, 37–38:*

[83] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, 2-րդ մաս, թ. 332–333:*

պատսպարվելու»: Թուրքերը հատկապես նկատի ունեին Անդրանիկի Առանձին հարվածող զորամասը (1918 թ. փետրվար-ապրիլ ժամանակահատվածում՝ Արևմտահայ դիվիզիա): 6-րդ հոդվածով ՀՀ տարածքում բնակվող մահմեդականները պետք է օգտվեին բոլորին հավասար իրավունքներից, դխավոր մուֆթին նստելու էր Երևանում, մյուսները՝ հանրապետության այլ վայրերում: 11-րդ հոդվածով «ՀՀ կառավարությունը պարտավորվում էր գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի Բաքու քաղաքից, պայմանագիրը ստորագրելուց անմիջապես հետո անհապաղ էվակուացվեն բոլոր հայկական զինյալ ուժերը և ապահովել, որ այդ էվակուացիան առիթ չտա ընդհարումների»[84]: Այս կետն ուղղակիորեն նկատի ուներ ՀՅԴ - Շահումյան համագործակցությունը և դրա վտանգը:

Պայմանագրի գործարկման մասին են վկայում տասնյակ փաստեր, որոնցից նշենք երկուսը: Հունիսի 9-ին թուրքական բանակային կորպուսի պարետ Քյազիմ Կարաբեքիրը, դիմելով Թ. Նազարբեկյանին, կարգադրում էր, որպեսզի, թուրքական զորքի հարավային ուղղությամբ առաջխաղացման հետ կապված, մինչև նշանակված սահմանը (ըստ Բաթումի պայմանագրի) տարհանել տարածքները և երկաթուղով առաջանալու համար Ալեքսանդրապոլ ուղարկել 15 շարժակազմ[85]:

Գանձակից էլ (Ելիզավետպոլ) տեղեկացնում էին՝ «տաճիկները զինաթափ են արել բոլոր հայերին, հայտնելով, որ բոլշևիկների Գանձակ գալու դեպքում հայերը կարող են միանալ նրանց»[86]:

Այսպիսով, ստեղծվեց 12 հազար քառակուսի կիլոմետր տարածքով, բոլորիս հայտնի Հայաստանը. «Պետական սահմանն անցնում էր Երևանի տակով,– գրում էր Լեոն,– Էնվեր փաշան գտել էր, որ միայն այսպիսի չափ ունեցող Հայաստանը կարող է երկյուղ չներշնչել Թուրքիային: Իսկությունն այն էր, որ Թուրքահայաստանը ոչնչացնելուց հետո երիտթուրքերը ոչնչացնում էին նաև Ռուսահայաստանը: Այս ծաղրական հանրապետությունն էլ, իհարկե, ժամանակավոր խաղ էր: Կ. Պոլսում թուրքերը հրատարակել էին Անդրկովկասի քարտեզը, որի վրա այլևս Հայաստան չէր մնում: Թուրքերի ամենամեծ հոգն էր այժմ Ադրբեջան կազմակերպելը: Էնվերի եղբայրը՝ Նուրի-փաշան, Պարսկաստանի վրայով գնաց Գանձակ, սկսեց այնտեղ տեղական թուրքերից զորքեր կազմել և միևնույն ժամանակ ավելի մեծ ուժերով վերանորոգել կռիվը Բաքվի դեմ, որ հեղափոխական պրոլետարիատի ձեռքին էր, բայց պիտի դառնար Ադրբեջանի մայրաքաղաք»[87]:

Հունիսի 16-ին Լոռու և Ղազախ-Շամշադինի Հայրենակցական միությունների ընդհանուր ժողովը բանաձև ընդունեց այդ գավառները Վրաց Հանրապետությանը կցելու դեմ[88]: Հունիսի 26-ին Հայրենակցական միությունը դիմում է ՀԱԽ-ին՝ «դիմել ամենակտրուկ միջոցների այդ առթիվ և վարչություններին իրազեկ պահել այդ խնդրի վերաբերյալ արված քայ-

[84] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, 2-րդ մաս, թ. 332–333:*
[85] *ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 50, թ. 4:*
[86] *«Հորիզոն», 15. VI. 1918:*
[87] *Լ. ե ո. 2009, 369:*
[88] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 108:*

լերին»: Նկատենք, որ Լոռու և Ղազախ-Շամշադինի Հայրենակցական միության նախագահն էր Հովսեփ Արղությանը (Իշխան)[89]:

Հունիսի 20-ին Շուլավերի հասարակական լիազորները դիմում են ՀԱԽ-ին՝ «խնդիր» ձևակերպումով: Ներկայացնելով մայիսի 7-ից սկված թուրքական վայրագությունները, թալանը, վրաց-գերմանական զորքերի հետ ընդհարումից հետո՝ թշնամական վերաբերմունքի սաստկացումը, սպանությունները, տեղի թաթարների ավազակային հարձակումները և ինքնապաշտպանական միջոցների բացակայությունը՝ նրանք ՀԱԽ-ին խնդրում էին ապահովել հայ բնակչության ֆիզիկական գոյությունը[90]:

Անկախության սկզբնական փուլում ՀԱԽ-ի և ՀՅԴ վերջին հստակեցումները քաղաքական կողմնորոշման հարցում

Անհրաժեշտ է հասկանալ ու հստակեցնել ՀՅԴ և ՀԱԽ-ի համատեղ ձևակերպած «հայկական գավառներ» եզրույթի ի հայտ գալու և վերջնականապես կիրառվելու հարցում: Վրաստանն ամենամանրակրկիտ ձևով և բավական վստահ նախանշում էր իր սահմանները, Ադրբեջանը նույնպես հստակ շրջանակ էր վերցնում՝ յուրացնելով արևելյան ու հարավային Անդրկովկասը: Երկուսն էլ իրենց նորաստեղծ պետությունները փորձում էին ձևավորել հայկական ու հայաբնակ տարածքների հաշվին և դա ամրագրել էին իրենց անկախության հռչակագրերում: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ հայկական քաղաքական վերնախավը՝ ի դեմս ՀԱԽ-ի որոշում է սահմանափակվել «հայկական գավառներ» անորոշ տերմինաբանությամբ: Թերևս դրսևորվում էր դեռ 1917 թ. փետրվարից հետո կայացած համառուսական ու անդրկովկասյան խորհրդակցություններում ձևակերպված սահմանազատման գործոնը, որը իբր բոլորի համար պարզ էր դարձնում «հայկական գավառների» ընդգրկումը:

Վրաստանի՝ գերմանական, Ադրբեջանի՝ թուրքական բաց ու համարձակ քաղաքական կողմնորոշումները Բաթումի պայմանագրից անմիջապես հետո բացահայտեցին հարևանների անթաքույց զավթողական հակումները: Դա էր, որ հայկական քաղաքական վերնախավին դես ու դեն էր նետում՝ թուրք-գերմանական-խորհրդային կողմնորոշումների ջրապտույտի մեջ:

Եթե նրանց մոտ դա հետևողական ու նպատակային գործընթաց էր, ապա հայկական քաղաքական դաշտը, հասկանալի է՝ Դաշնակցության գլխավորությամբ «փրփուրներից բռնվելու» վարքագիծ էր ընտրել, ավելի ճիշտ՝ անհեռատես վարքագծի հետևանքով հայտնվել էր այնպիսի իրավիճակում, երբ ամեն ինչ հնարավոր էր նրան թելադրել ու պարտադրել:

Այդպես, մայիսի 26-ի ՀԱԽ-ի նիստում հնչեց ՀԺԿ ղեկավարներից Սամսոն Հարությունյանի կարծիքը, որ, եթե Վրաստանի անկախացմամբ բոլոր պետական կառույցները մնում են այդ անկախ Վրաստանի տարածքում, «իսկ թուր-

---

[89] *ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 109:*
[90] *ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 97:*

քերն ու հայերը զուրկ են բոլոր միջոցներից, ուրեմն պետք է իրար հետ խորհրդակցել և փոխադարձ համաձայնությամբ մի կամ առանձին իշխանություն (հայ-ադրբեջանական – Վ. Մ.) կազմել՝ առայժմ մնալով Թիֆլիսում, մինչև կպարզվի դրությունը»[91]: Չգիտես ինչու, Ս. Հարությունյանը վստահում էր, որ ադրբեջանցիների ներսում երկու հոսանք կա: Մեկը ցանկանում է օսմանյան տիրապետություն, մյուսը՝ անկախություն՝ Թուրքիայի հովանավորությամբ, ուստի և եզրակացնում էր, որ «պետք է օգտվել մի իշխանություն կազմելու հնարավորությունից, քանի դեռ օսմանցիք չեն առաջացել»[92]:

Խ. Կարճիկյանը հակադարձում է, որ Երևանի ու Գանձակի բոլոր թուրք ներկայացուցիչները կողմնակից են օսմանյան տիրապետությանը, և միայն Բաքվի «մի փոքրիկ ինտելիգենցիայի խմբակ Մ. Ռասուլզադեի գլխավորությամբ դեմ են այդ քայլին: Ղ. Տեր-Ղազարյանն, օրինակ, «հայասեր» թաթարներին չէր հավատում»[93]:

Եվ ահա այս համատեքստում ու թաթար-ադրբեջանցիների հետ մերձենալու տեսքով, ավարտուն կերպարանք էր փորձում ստանալ արդեն Հայաստանի Հանրապետության թուրքական քաղաքական կողմնորոշումը: Դաշնակցության պաշտոնաթերթ «Հորիզոն»-ը հունիսի 8-ին արդեն գտնում էր, որ «հաշտությունը կնքված է ուրեմն հայ ժողովուրդը այսօր այլևս թշնամի չունի և արմատորեն պիտի փոխվի նրա մտածելակերպն ու վերաբերմունքը դեպի իր դրացիները քանի չի խախտվել կնքված խաղաղությունը: Հայ և թուրք մասսաները Անդրկովկասում երկար տարիներ ապրել են կողք կողքի և եղել են միշտ բարեկամներ[94]: Խմբագրականի հեղինակը՝ հավանաբար, Ս. Վրացյանը, չգիտես ինչու, ընդգծում էր Անդրկովկասի «հայ և թուրք մասսաներին»՝ մոռանալով՝ հաշտությունը Թուրքիայի հետ է կնքվել, որը Հայաստանից գրեթե ոչինչ չէր թողել: Հասկանալի է, որ նոր «Ադրբեջանի» հետ մտերմանալով՝ ապահովվում էր և թուրքական կողմնորոշումը:

Անգամ դժվար է մեկնաբանել՝ կարելի է, իհարկե, հանգիստ ու կշռադատելով հիմնավորել քաղաքականության և կողմնորոշումների էությունը, շահավետության առաջնության գործոնը, էլ չենք ասում Անտանտի դաշնակիցների հանդեպ՝ մեղմ արտահայտված ոչ պարկեշտ ու պատեհապաշտ վարքագիծը, սակայն դա էր թելադրում և պարտադրում նորանկախ Հայաստանին ստեղծված իրավիճակը:

Դեռ մայիսի 5 (18)-ին ՀՅԴ Թիֆլիսի կենտրոնական և տեղական կոմիտեների օրգան «Աշխատավոր»-ը, նշելով, որ «մեր դժբախտ երկիրը հեշտությամբ Շվեյցարիա չի դառնալու և մենք էլ չվեյցարացի,– եզրակացնում էր,–

---

[91] *Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս). 2009, 24:*

[92] *Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս). 2009, 24:*

[93] *Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս). 2009, 24–25:*

[94] *«Հորիզոն», 08. VI. 1918:*

որ նա գնում է ստրկանալու տաճկա-գերմանական իմպերալիզմին»[95]: Դա միանգամայն լուրջ ընտրություն էր: Ալ. Խատիսյանը ընթերցողին անհայտ իր «Օրագրում»[96] մայիսի 23-ի Բաթումի գործընթացից հայտնում էր, որ Հ. Օհանջանյանը, Մ. Պապաջանյանը և ինքը՝ Օ. ֆոն Լոսսովից խնդրում էին օգնություն և հայության պաշտպանություն: Վերջինս խոստանում էր այդ մասին հեռագրել կայզեր Վիլհելմին, զորաջոկատ ձևավորել, նախատեսվող հայկական պատվիրակությանը իր հետ տանել Գերմանիա: Առանձնահատուկ հույսեր Օ. ֆոն Լոսսովը չէր տալիս և խնդրում էր քննարկել այն հարցը, թե որքանո՞վ է նպատակահարմար հայերի համար, որպեսզի Գերմանիան Կովկասում չունենա իրական ուժ և միաժամանակ հայտարարի, որ վերցնում է հայերի պաշտպանության գործը: «Մենք 23-ի գիշերը,– հիշում է Ալ. Խատիսյանը,– գրավոր դիմում ուղարկեցինք՝ Կովկասի հայկական գավառների օկուպացիայի խնդրանքով: Մայիսի 24-ին Կարճիկյանին հեռագրեցինք, որ խորհուրդ ենք տալիս թուրքերին չդիմադրել»[97]: Մայիսի 25-ի երեկոյան Օ. ֆոն Լոսսովը խնդրում է այցելել իրեն: Ալ. Խատիսյանը և Հ. Քաջազնունին 1,5 ժամ զրուցում են նրա հետ շոգենավի վրա: Նա առաջարկում էր. անհապաղ պատվիրակություն ուղարկել Բեռլին, հռչակել Հայաստանի անկախությունը, առայժմ չկապվել Վրաստանի և Ադրբեջանի հետ, վստահել իր ու Շուլենբուրգի պաշտպանությանը, թուրքերի հետ ռազմական ընդհարումները դադարեցնել, այդ ամենն անել 2–3 շաբաթվա ընթացքում և հաշտություն կնքելիս դա չանել միայն Թուրքիայի հետ[98]:

Ի դեպ, Բաթումում՝ մայիսի 26-ին ՀԱԽ-ի անդամ Մ. Պապաջանյանի և նրա գործընկերներ Աղաևի ու Հուսեյնովի միջև զրույցի ընթացքում՝ հաստատվում է հայ-ադրբեջանական համաձայնություն ձևավորելու ծրագրի առկայությունը, որն ընդունվում էր և Թուրքիայի կողմից: «Հեռացան ավտոմեքենաները, պատվիրակները և մենք արցունքախառը կատակում էինք, – նշում էր Ալ. Խատիսյանը,– որ Անդրկովկասը փլուզվում է, զգացվում էր, որ մահմեդականներն ու հայերը ավելի մոտ են իրար, քան վրացիներն ու հայերը»[99]: Ցավոք, այս խոստովանությամբ անգամ բացահայտվում էր թե՛ Ալ. Խատիսյանի և թե՛ իր գործընկերների անհեռատեսությունը, պատեհապաշտական զգացումները, մոլորվածությունը: Ուշագրավ են նաև Ալ. Խատիսյանի ևս մի քանի վկայություններ. հունիսի 1-ին, երբ Բաթումում վրացիները սրեր էին ճոճում, Վեհիբ փաշան և Խալիլ բեյն ասում էին, թե «մի՞թե վրացիները լուրջ մտածում են, որ Վրաստանի համար գերմանացիները կկռվեն Թուրքիայի հետ: Դրա համար խելագար պետք է լինել: Մենք նրանց հետ միլիոն

---

[95] *Տե՛ս «Աշխատավոր» (Թիֆլիս), 05. V. 1918:*

[96] *Ալ. Խատիսյանի օրագրությունը հրատարակության է պատրաստվել 1919 թ. ընագրից կատարված մեքենագրության հիման վրա: Վերջինս պատրաստվել է Աստվածատուր Խաչատրյանի աշխատանքի համար (տե՛ս* Խ ա չ ա տ ր յ ա ն. *2010, 262):*

[97] Խ ա չ ա տ ր յ ա ն. *2010, 161–162:*

[98] Խ ա չ ա տ ր յ ա ն. *2010, 163:*

[99] Խ ա չ ա տ ր յ ա ն. *2010, 163:*

անփոփոխ կապեր ունենք: Խալիլը տարակուսանք հայտնեց, թե Ադրբեջանի համար անկախությունն անհրաժեշտ է»[100]*:*

Ալ. Խատիսյանը կուսակից ընկերներին հայտնում էր իր վերջին երեք ամիսների տատանումները՝ ստորագրելու ստորագրելու կամ կռիվը շարունակելու հարցում: «Եվ հիմա ասում եմ,– եզրակացնում էր նա,– եթե չլիներ Ղարաքիլիսայի հերոսամարտը, որ թուրքական գեներալի հիացմունքն է առաջացրել, եթե չլիներ այդ վերջին կռիվը, գուցե այսօր մենք լինեինք ավելի վատ պայմաններում: Ճիշտ է Տրապիզոնյան բանակցությունների ժամանակ մենք մտածում էինք ունենալ Գերմանիայի չափ տերիտորիա, այսօր ունենք Բելգիայից երկու անգամ փոքր, սակայն երկու անգամ մեծ, քան Զեռնոգորիան էր: Մենք ունենք վերջապես մի անկախ Հայաստան. ընդամենը 12.000 քառ. վերստ տարածություն ունի նա և 800.000 բնակիչ: Չհուսահատվենք»[101]*:*

Ինչպես կարելի է չհուսահատվել, երբ Տրապիզոնի՝ ողջ ձախողված ու հակահայկական գործընթացն Ալ. Խատիսյանը նույնացնում է 1918 թ. մարտ–ապրիլ ամիսների ընթացքում չկռվելու, Էրզրումն ու ողջ Արևմտյան Հայաստանը հանձնելու քաղաքականությամբ՝ Գերմանիայի չափ երկիր ունենալու հետ: Անգամ Բաթումից հետո հույսը կապելով հայ ժողովրդի ստեղծարար ոգու ու կամքի հետ՝ նա դարձյալ գտնում էր, թե «միայն կարողանանք միանալ Թուրք և վրացի դեմոկրատիաների հետ և միացյալ ուժերով ամրացնենք մեր սահմանները: Այս է օրվա պահանջը, այս ուղղությամբ պիտի աշխատեն Անդրկովկասի 3 կառավարությունները»[102]*:*

Ինչպե՞ս կարելի էր «միացյալ ուժերով ամրացնել սահմանները, երբ վրացգերմանական զորքերն արդեն Սանահինում էին, թաթար-մահմեդականները իրենց պատառն էին պոկել ու թուրքերի հետ դեռ նոր ոճիրների էին պատրաստվում: Հայ ազգային գործիչներից շատերը, ինչպես այս բախտորոշ, այնպես էլ Հանրապետության ողջ գոյության ընթացքում, չկարողացան տարանջատել հերթապահ կարգախոսները, «դեմոկրատիայի» առջև կույր խոնարհումը՝ իրական քաղաքականությունից: Վրաց մենշևիկներն ու թաթար գործիչները ևս օգտագործում էին ժամանակի արդեն մոդայիկ դարձած եզրույթները, բայց միաժամանակ «գործ» էին անում՝ Հայաստանի տարածքների հաշվին պետություն էին ստեղծում:

Եվ, վերջապես, ՀԱԽ-ը, այսինքն՝ ՀՀ կառավարությունը, Երևան ժամանեց միայն 1918 թ. հուլիսի 19-ին, բավական ուշ, երբ հարևաններն իրենց դաշնակիցների հետ հիմնականում լուծել էին իրենց խնդիրները:

Եզրակացություն

1918 թ. մայիսին անդրկովկասյան հանրապետությունների անկախության հռչակումից և Բաթումի պայմանագրի կնքումից հետո մինչև սեպտեմբերի կեսերը, թուրքական բանակն ու գերմանական որոշ զորամասեր ոչ

[100] *Խաչատրյան. 2010, 160:*
[101] *«Աշխատավոր», 05. V. 1918:*
[102] *«Աշխատավոր», 05. V. 1918:*

միայն տեղաբաշխված էին Հայաստանում և Վրաստանում, այլև ակտիվորեն ներգրավված էին մանակի ռազմական գործողությունների մեջ ու տարածքային, սահմանային վերաբաժանումների հարցերում: Հակամարտությունների ակտիվ գոտիներ էին Արարատյան դաշտը, Սյունիքը, Լոռին, Բորչալուի գավառը, Վայոց ձորը, Ղարաբաղը:

Բաթումի պայմանագիրն իրականում չէր գործում. վրացական ու ադրբեջանական կառավարությունները, ելնելով անկախության հռչակագրերի տարածքային դրույթներից, վճռականորեն փորձում էին գավթել հայկական տարածքները:

Վահան Մելիքյան – պ. գ. դ., պրոֆ., Մ. Հերացու անվ. ԵՊԲՀ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ընդհանուր պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայոց պատմության 1914–1921 թթ. ժամանակաշրջան, մասնավորապես՝ 1917 թ. ռուսաստանյան երկու հեղաշրջումների, կուսակցությունների, Հայկական հարցի, անդրկովկասյան իշխանությունների ու անկախ հանրապետությունների առաջացման, արևմտահայության խնդիրները և այլ հիմնահարցեր: Հեղինակ է 9 մենագրության, 1 կոլեկտիվ գրքի, փաստաթղթերի ժողովածուի և 100 հոդվածի: v_melikyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա-Դո. 2019, Հայության երկունքը, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 763 էջ:

Խաչատրյան Ա. 2010, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 286 էջ:

Կնյազյան Դ. 2008, Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918–1920 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 200 էջ:

Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. Քաղաքական պատմություն, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Վ. Ղազախեցյան, Գ. Գալոյան, Մելիքյան Վ. և ուրիշներ, Երևան, 2000, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 454 էջ:

Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող՝ Հ. Սուքիասյան. 2009, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 219 էջ:

Մախմուրյան Գ. 2020, Հովհաննես Թումանյանի մասնակցությունը Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելությունը Բաթումում (1918 թ. հուլիսի 3–5). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, էջ 17–30:

Մելիքյան Վ. 1997, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), Երևան, «Մխիթար Գոշ», 319 էջ:

Մելիքյան Վ. 2018, Պայքար Բաքվի համար (1917 թ. նոյեմբեր–1918 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ հրատ., 223 էջ:

Մելիքյան Վ. 2010, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում, Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր–1918 թ. փետրվար), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 263 էջ:

Մելիքյան Վ. 2019, Արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքը 1917–1918 թթ.: Էրզրումի պաշտպանությունը և անկման պատճառները, Երևան, «Զանգակ-97», 246 էջ:

Մելքոնյան Ա. Ա. 2003, Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 543 էջ:

Ջամալյան Ա. 2011, Հայ-վրացական կնճիռը, Երևան, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ «Միտք» վերլուծական կենտրոն, 243 էջ:

Армяно-грузинский вооруженный конфликт. 1919, Баку, Изд. Бак. Арм. Нац. Совета инс. Урардия, Б. И. Тип. Им. Мясникова, 38 с.

Завриев Д. С. 1947, К новейшей истории Северо-восточных вилайетов Турции. Тбилиси, Тбилис. гос. ун-т., 369 с.

Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. 1919, Тифлис, 504 с.

Из истории армяно-грузинских отношений, 1918 год (Пограничные конфликты; переговоры; война; соглашение). 1919. Тифлис, Гос. типография, 141 с.

Кариби (П. Гелешвили). 1920, Красная книга. Тифлис, 173 с.

Allen W., Muratoff P., Caucasian Battlefields: A History of the Wars on the Turco – Caucasian Border 1828–1921. Cambridge, 1953, p. 477–478.

МЕЖГОСУДАРСТВЕННЫЕ ТЕРРИТОРИАЛЬНЫЕ И ПОГРАНИЧНЫЕ ПРОБЛЕМЫ ПОСЛЕ ПРОВОЗГЛАШЕНИЯ НЕЗАВИСИМОСТИ ЗАКАВКАЗСКИХ РЕСПУБЛИК
(Июнь–июль 1918 г.)

ВААН МЕЛИКЯН

Р е з ю м е

Ключевые слова: Армения, Грузия, Азербайджан, Германия, Османская империя, О. фон Лоссов, Н. Жордания, Вехиб-паша, Т. Назарбекян, Арам Манукян, Х. Карчикян, Лори, Борчалу, Ахалкалак, Карабах.

Батумский договор как пока что единственный международный политический акт, признающий независимость Грузии, Азербайджана и Армении и тем самым принявший территории и условные границы независимых республик, все-таки не смог предотвратить военное присутствие Османской Турции и Германии в регионе и, в частности в Армении, до конца июля 1918 года. Об этом свидетельствуют нововыявленные архивные документы.

С географической точки зрения конфигурация новых границ носила искусственный характер и выявила захватнические планы Турции, в частности план захвата Баку.

Накануне объявления независимостей, в политических кругах края уже делились национальные территории.

По сравнению с воззванием-объявлением независимости Армении, в декларациях о независимости Грузии и Азербайджана четко определялись территории новообразованных государств: грузины претендовали на все северные районы Армении, включая до северного побережья озера Севан; Азербайджан отмечал, что ему принадлежит Восточное и Южное Закавказье, то есть, все то, что не входило в состав Грузии. Получается, что остальное и есть определенные Армянским национальным советом «армянские уезды».

Процесс обсуждений начался 2-го, а уже с 11 июня – практическое осуществление раздела территорий, когда заседание Правительства Грузинской демократической республики решило, что определение границ между республиками всецело является приоритетом трех правительств.

С 19 июня по 6 июля 1918 г. в Александраполе (Гюмри) состоялись пять заседаний армяно-турецкой межгосударственной комиссии, основная цель которой состояла в установлении демаркационной линии. Большая часть обсуждаемых вопросов комиссии не получила решения, и 26 июля армянская делегация покинула Александраполь.

Армяно-грузинские пограничные споры привели к тому, что весь Лори и Борчалу были заняты турками. В июне 1918 г. в татарских районах Борчалинского уезда, где установилась власть Грузии, начались мусульманские восстания, а также столкновения между турецкими и германскими военными формированиями.

Согласно подписанному 3 июня грузино-турецкому соглашению, некоторые части Ахалкалакского и Ахалцыхского уездов переходили к Турции. Претензии на те же уезды имели также Грузия и Азербайджан. Азербайджан, одновременно, отказывался от армянской части Ахалкалакского уезда.

14 июня «Земляческий союз Арцаха и Сюника» вынес решение о том, что эти области обязательно должны быть присоединены к Республике Армения. Этот факт является правовой основой в процессе уступок армянских территорий. Значительную роль сыграло также запоздалое формирование армянского правительства: Армянский национальный совет прибыл из Тифлиса в Ереван только 19 июля 1918 года.

Ваан Меликян – д. и. н., проф., заведующий кафедрой общественных наук ЕГМУ им. М. Гераци, ведущий научный сотрудник отдела всеобщей истории Института истории НАН РА. Научные интересы: история Армении периода 1914–1921 гг., в частности вопросы, связанные с двумя российскими революциями 1917 г., партиями, Армянским вопросом, закавказскими властями, возникновением независимых республик, задачами западных

армян и др. Автор 9 монографий, 1 коллективной монографии, сборника документов и 100 статей. v_melikyan@mail.ru

INTERSTATE TERRITORIAL AND BORDER DISPUTES
AFTER THE DECLARATION OF INDEPENDENCE
OF THE TRANSCAUCASIAN REPUBLICS
(June–July1918)

VAHAN MELIKYAN

S u m m a r y

Key words: Armenia, Georgia, Azerbaijan, Germany, Ottoman Empire, O. von Lossov, N. Jordania, Vehib Pasha, T. Nazarbekyan, Aram Manukyan, Kh. Karchikyan, Lori, Borchalu, Akhalkalaki, Karabakh.

The Batumi Treaty, so far the only international political act recognizing the independence of Georgia, Azerbaijan and Armenia thereby accepting the territories and conditional borders of independent republics, still could not prevent the presence of the military troops of Ottoman Turkey and Germany in the region and, in particular, in Armenia until the end of July 1918. This was evidenced by newly discovered archival documents.

From a geographic point of view, the configuration of the new borders was artificial and revealed the aggressive plans of Turkey, in particular, the plan to seize Baku.

On the eve of the declaration of independence, national territories in the political circles of the region were already being divided.

Compared to the proclamation-announcememt of independence of Armenia, the declarations of independence of Georgia and Azerbaijan clearly defined the territories of the newly formed states: Georgians claimed all northern regions of Armenia, including the northern coast of Lake Sevan, Azerbaijan noted that it owned the Eastern and Southern Transcaucasia, that is, all the territories which were not included in the territory of Georgia. Consequently, the rest were the "Armenian districts" defined by the Armenian National Council.

The discussions began on the 2nd, and already on the 11th of June, the practical implementation of the division of territories, when the meeting of the Government of the Georgian Democratic Republic decided that the determination of the borders between the republics was entirely a priority of the three governments.

From June 19 to July 6, 1918 five sessions of the Armenian–Turkish interstate commission were held in Alexandrapol (Gyumri), whose main goal was to establish a demarcation line. Most of the issues discussed by the commission were not resolved and on July 26 the Armenian delegation left Alexandrapol.

The Armenian–Georgian border disputes led to the result that all of Lori and Borchalu districts were occupied by the Turks. In June 1918 in the Tatar regions of the Borchalu district, where the Georgian forces were established, Muslim uprisings began, as well as collisions between Turkish and German military formations.

According to the Georgian–Turkish agreement signed as of June 3, some parts of the Akhalkalaki and Akhaltsikhe districts were transferred to Turkey. Georgia and Azerbaijan also had claims to the same districts. Azerbaijan, at the same time, renounced the Armenian part of the Akhalkalaki district.

On June 14, the "Compatriotic Union of Artsakh and Syunik" made a decision that these regions had to be joned to the Republic of Armenia. This fact was a legal basis in the process of concessions to Armenian territories, a significant role was also played by the belated formation of the Armenian government: the Armenian National Council from Tiflis arrived in Yerevan only on July 19, 1918.

Vahan Melikyan – Doctor of Sciences in History, Professor, Head of the Chair of Social Sciences of the YSMU after M. Heratsi, Leading Researcher at the NAS RA Institute of History. Scientific interests: the history of Armenia of the period 1914–1921, in particular, the issues of the two 1917 Russian coups, the political parties, the Armenian question, Transcaucasian authorities, the emergence of independent republics, the problems of Western Armenians and other issues. Author of 9 monographs, collection of documents, 1 collective monograph and over 100 articles,. v_melikyan@mail.ru